ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS[4]	NKJV	NRSV	TEV	NJB
Մահից դեպի կյանք	Շնորհքով՝ հավատի միջոցով	Քրիստոսի բերած օգուտները	Մահից դեպի կյանք	Քրիստոսով փրկությունը ձրի պարգև է
2:1-10	2:1-10	2:1-10	2:1-3	2:1-6
			2:4-10	
				2:7-10
Քրիստոսով մեկ	Մերձեցած Նրա արյամբ		Քրիստոսով մեկ	Հրեաների և հեթանոսների հաշտությունը ուրիշների և Աստծո հետ
211-13	2:11-13	2:11-22	2:11-12	2:11-18
	Քրիստոս մեր խաղաղությունը		2:13-18	
2:14-22	2:14-22			
			2:19-22	2:19-22

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2:1-22-Ի ՀԱՄԱՐ

Ա. Մարդկային գործերով փրկություն ձեռք բերելու գնոստիկ և հրեական շեշտադրությունը արժեզրկվում է Պողոսի հետևյալ շեշտադրությամբ՝
   1. Աստծո ընտրությունը Եփես. 1:3-14-ում
   2. Աստծո իմաստությունը, գիտությունը և հայտնությունը, Եփես. 1:15-23
   3. Աստծո նախաձեռնող սերը Եփես. 2:1-10-ում

4. Աստծո փրկության ծրագիրը դարեր շարունակ ծածկված (այսինքն՝ հրեա և հեթանոս հիմա մեկ են Քրիստոսում) Եփես. 2:11-3:13-ում:

Պողոսը շեշտադրում է չորս բան, որում մարդիկ բաժին չունեն: Փրկությունը ամբողջությամբ Աստծուց է (տես՝ Եփես. 1:3-14, 2:4-7), սակայն անհատ անձիք պետք է իրենք պատասխան տան՝ արձագանքեն փրկությանը (տես՝ Եփես. 2:8-9) և ապրեն Նոր Ուխտի լույսի ներքո (Եփես. 2:10):

Բ. Եփես. 2:2-3-ում նկարագրվում են ընկած մարդկության երեք թշնամիները (տես՝ Հակ. 4:1,4,7)՝

1. ընկած աշխարհի համակարգը, Եփես. 2:2
2. հրեշտակային հակառակությունը՝ սատանան, Եփես. 2:2
3. մարդկության ընկած՝ խեղաթյուրված բնությունը (Ադամական բնությունը), Եփես. 2:3

1-3 համարները ցույց են տալիս ընկած մարդկության անհույս և անօգնական վիճակը առանց Աստծո և Նրա դեմ ապստամբության մեջ (տես՝ Հռոմ. 1:18-2:16):

Գ. Մինչ Եփես. 2:1-3 նկարագրում է մարդկության թշվառ վիճակը, Եփես. 2:4-6-ը հակադրում է Աստծո սիրո և ողորմության ճոխությունը մեղավոր մարդկության համար: Մարդկային մեղքը վատ է, սակայն Աստծո սերը և ողորմությունը շատ ավելի մեծ է (տես՝ Հռոմ. 5:20): Այն ինչ Աստված արեց Քրիստոսի համար (տես՝ Եփես. 1:20), Քրիստոսը այժմ արել է հավատացյալների համար (տես՝ Եփես. 2:5-6):

Դ. Նոր Կտակարանում իրական լարվածություն կա Աստծո ձրի շնորհքի և մարդկային ջանքի միջև: Այս լարվածությունը կարող է արտահայտվել պարադոքսալ զույգերով՝

1. Սահմանական (վիճակ) և հրամայական (որպես հրաման),
2. շնորհքի, հավատքի օբյեկտիվ (ավետարանի բովանդակությունը) և սուբյեկտիվ մասը (մարդու փորձառությունն ըստ ավետարանի),
3. շահիր՝ հաղթիր ընթացքը (Քրիստոսում) և այժմ վազիր ընթացքը (Քրիստոսի համար):

Այս լարվածությունը հստակ երևում է Եփես. 2:8-9-ում, որը շեշտադրում է շնորհքը, մինչ Եփես. 2:10-ը շեշտադրում է բարի գործերը: Ո՛չ մեկն է, ո՛չ էլ մյուսը այլ երկո՛ւսն էլ և աստվածաբանական հիմնավորումը: Այդուհանդերձ, շնորհքը միշտ էլ Քրիստոսակերպ կյանքի սկիզբը և հիմքն է: 8-10 համարները Քրիստոնեական ավետարանի պարադոքսի դասական ամփոփումն են՝ ձրի, սակայն արժեցավ ամեն ինչ: Հավատք <u>և</u> գործեր (տես՝ Հակ. 2:14-26):

Ե. Մի նոր թեմա է ներկայացվում Եփես. 2:11-3:13-ում: Դա սկզբից ծածկված խորհուրդն է, որ Աստված կամենում է ամբողջ մարդկության փրկությունը՝ հրեայի (տես՝ Եզեկ. 18:23, 32) և հեթանոսի (տես՝ 1 Տիմ. 2:4, Տիտոս 2:11, 2 Պետ. 3:9), Մեսիայի փոխանորդական քավությանը անձնական հավատքի միջոցով: Փրկության այս տիեզերական մասշտաբի առաջարկը կանխասված էր Ծննդոց 3:15 և 12:3-ում: Այս ամբողջովին ձրի թողությունը՝ ներումը (տես՝ Հռոմ. 5:12-21) զարմացրեց հրեաներին և ամբողջ կրոնական էլիտային (գնոստիկ սուտ վարդապետներին, հուդաիստներին) և ամբողջ ժամանակակից «գործերով արդարացման» կողմնակիցներին:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2:1-10

[1]Եվ Նա ձեզ կենդանացրեց, որ մեռած էիք հանցանքների ու մեղքերի մեջ, [2]որոնց մեջ մի ժամանակ քայլում էիք այս աշխարհի ընթացքով, ըստ օդի իշխանության իշխանի, այն ոգու, որ հիմա ներգործում է անհնազանդության որդիների մեջ. [3]որոնց հետ մենք բոլորս էլ մի ժամանակ քայլում էինք մեր մարմնավոր ցանկություններով, մարմնի և մտքի կամքը կատարելով, և բռնությամբ, ուրիշների նման, բարկության որդիներ էինք: [4]Բայց Աստված, որ առատ է ողորմությամբ, Իր մեծ սիրո պատճառով, որով մեզ սիրեց, [5] նույնիսկ մենք երբ հանցանքների մեջ մեռած էինք, մեզ կենդանացրեց Քրիստոսի հետ միասին (շնորհով եք դուք փրկված). [6]և Նրա հետ մեզ հարուցեց և Նրա հետ նստեցրեց երկնային տեղերում՝ Քրիստոս Հիսուսի մեջ. [7]որ գալիք դարերի մեջ ցույց տա Իր շնորհի չափազանց հարստությունը՝ Քրիստոս Հիսուսով մեզ ցույց տրված բարությամբ: [8]Որով-հետև շնորհով եք դուք փրկված հավատի միջոցով, և սա ոչ թե ձեզնից է այլ Աստծո պարգևն է. [9]ո՛չ թե գործերից, որպեսզի ոչ մեկը չպարծենա: [10]Որովհետև մենք Նրա ձեռքի գործն ենք, Քրիստոս Հիսուսով բարի գործերի համար ստեղծված, որոնց Աստված նախապես պատրաստեց, որ նրանց մեջ քայլենք:

2:1 Հունարենում թե՛ Եփես. 2:1-7-ը և թե՛ Եփես. 2:1-10-ը կազմված են մի նախադասությունից, հիմնական բայը տեղակայված լինելով Եփես. 2:5-ում: Այն մեկ փաստարկ է: Պողոսը ներկայացնում է հետևյալը՝

1. ամբողջ մարդկության անհույս և անօգնական, կորած վիճակը՝ Եփես. 2:1-3
2. Աստծո շնորհքը, որին հնարավոր չէ արժանանալ՝ Եփես. 2:4-7
3. մարդու կողմից պարտադիր տրվող արձագանքը՝ հավատքն ու կյանքը, Եփես. 2:8-10

❖ **«ձեզ»** Կողոսացիների և Եփեսացիների մեջ այս հոգնակի դերանունը միշտ վերաբերում է հավատացյալ հեթանոսներին (տես՝ Եփես. 1:13, 2:12):

❖ **«մեռած էիք»** Սա ներկա ներգործական դերբայ է, որը նշանակում է «մեռած լինել»: Սա վերաբերում է հոգևոր մահվանը (տես՝ Եփես. 2:5, Հռոմ. 5:12-21, Կող. 2:13):Աստվածաշունչը խոսում է մահվան երեք փուլերի մասին՝

1. հոգևոր մահը (տես՝ Ծնն. 2:17, Ծննդոց 3, Ես. 59:2, Հռոմ. 7:10-11, Հակ. 1:15)
2. ֆիզիկական մահվան (տես՝ Ծնն. 2:16-17, 3:4-5, 5)
3. հավիտենական մահվան, որը կոչվում է «երկրորդ մահ» (տես՝ Հայտն. 2:11, 20:6,14, 21:8)

❖ **«հանցանքներ»** Հունարեն այս տերմինը (*paraptōma*) նշանակում է «մի կողմի վրա ընկնել» (տես՝ Եփես. 1:7): «Մեղքերի» համար բոլոր հունարեն բառերը կապված են Աստծո արդարության չափանիշներից շեղվելու՝ հեռանալու հասկացողության հետ: «Ճիշտ», «արդար» և դրանցից բխող բոլոր տերմինները Եբրայերենում ծագում են չափման եղեգի համար կիրառվող շինարարական փոխաբերությունից: (տես՝ Հատուկ Թեմա Եփես. 4:24-ում): Աստվա՛ծ է չափանիշը: Բոլոր մարդիկ շեղվում են այդ չափանիշից (տես՝ Սաղմ. 14:1-3, 5:9, 10:7, 36:1, 53:1-4, 140:3, Ես. 53:6, 53:7-8, Հռոմ. 3:9-23, 1 Պետ. 2:25):

❖ **«մեղքեր»** Հունարեն տերմինը (*hamartia*) նշանակում է «նշանակետին չխփել» (տես՝ Եփես. 4:26): Մեղքի համար 1 խոսքում կիրառված երկու տերմինները որպես հոմանիշներ են, որպեսզի լուսաբանեն մարդկության մեղսունակ, օտարացած վիճակը (տես՝ Հռոմ. 3:9,19,23, 11:32, Գաղ. 3:22):

2:2 «որոնց մեջ մի ժամանակ քայլում էիք» «Քայլել» բառը սուրբգրային փոխաբերություն է ապրելակերպի համար (տես՝ Եփես. 2:2,10, 4:1,17, 5:2,8,15):

NASB, NKJV	**«այս աշխարհի ընթացքի պես»**
NRSV	**«հետևելով այս աշխարհի ընթացքին»**
TEV	**«հետևում էիք այս աշխարհի չար ճանապարհին»**
NJB	**«ապրելով այս աշխարհի սկզբունքներով»**

Ներկայիս այս ընկած աշխարհի համակարգը (այսինքն՝ դարը) անձնավորվում է որպես թշնամի (տես՝ Գաղ. 1:4): Մեղավոր մարդկությունը փորձում է իր բոլոր կարիքները հոգալ առանց Աստծո: Հովհաննեսի թղթում այն կոչվում է «աշխարհ» (տես՝ 1 Հովհ. 2:2,15-17, 3:1,13,17, 4:1-17, 5:4,5,19) կամ «Բաբելոն» (տես՝ Հայտն. 14:8, 16:19, 17:5, 18:2, 10, 21): Մեր ժամանակակից տերմինաբանությամբ դա կոչվում է «աթեիստական մարդասիրություն»: Տե՛ս Հատուկ Թեմա. Պողոսի *Kosmos* բառի կիրառությունը, Կող. 1:6-ում:

NASB, NKJV	**«ըստ օդի իշխանության իշխանի»**
NRSV	**«օդի իշխանության կանոններին հետևելով»**
TEV	**«դուք հնազանդեցիք տիեզերքում հոգևոր իշխանությունների իշխանին»**
NJB	**«հնազանդվելով այն իշխանին, որ տիրում է օդի վրա»**

Սա մեղավոր՝ ընկած մարդկության երկրորդ թշնամին է՝ զրպարտիչ Սատանան: Մարդկությունը ենթարկվում է անձ հանդիսացող մի հրեշտակ փորձչի (տես՝ Ծննդոց 3, Հոբ 1-2, Զաքարիա 3): Նա կոչվում է այս աշխարհի իշխանը կամ աստվածը (տես՝ Հովհ. 12:31, 14:30, 16:11, 2 Կորնթ. 4:4, 1 Հովհ.5:19):

ՆԿ-ում օդը հանդիսանում է դիվական աշխարհի տիրակալությունը: Ավելի ցածր մակարդակի վրա գտնվող օդը (*aēr*) հույների կողմից դիտարկվում էր որպես անմաքուր և հետևաբար չար ոգիների տիրույթը: Ոմանք «օդ» բառի այս կիրառությունը համարում են հոգևոր աշխարհի ոչ նյութական բնությունը: «Եկեղեցու հափշտակության» գաղափարը ծագում է 1 Թեսաղ. 4:17-ի լատինական թարգմանությունից՝ «վեր վերցվել»: Քրիստոնյաները հանդիպելու են Տիրոջ հետ Սատանայի թագավորության հենց մեջտեղում՝ «օդի մեջ», ցույց տալու դրա տապալումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՁՆԱԿԱՆ ՉԱՐՔ
SPECIAL TOPIC: PERSONAL EVIL

Այս թեման բարդ համարելու համար կան մի քանի պատճառներ.

1. ՀԿ-ը հայտնում է ոչ թե բարու ոխերիմ թշնամու մասին, այլ ՅԱՀՎԵի մի ծառայի, որը մարդկությանը առաջարկում է երկընտրանք, ինչպես նաև մեղադրում է մարդկությանը անարդարության մեջ: Կա միայն մեկ Աստված (մոնոթեիզմ՝ միաստվածություն), մեկ իշխանություն, ՀԿ-ում միայն մեկ պատճառ՝ ՅԱՀՎԵՆ:
2. Աստծո ոխերիմ թշնամու հասկացությունը ձևավորվել է միջաստվածաշնչյան (անկանոն) գրականության մեջ՝ պարսկական դուալիստիկ կրոնի (*Զրադաշտականության*) ազդեցության ներքո: Սա էլ իր հերթին մեծապես ազդեցություն է թողել ռաբբիական Հուդայականության և Էսսենների համայնքի վրա (այսինքն՝ Մեռյալ Ծովի Գալարները):
3. ՆԿ-ը զարգացնում է ՀԿ-ի թեմաները ամբողջական, սակայն ընտրված կատեգորիաներում:

   Եթե մեկը հասնում է չարի մասին ուսումնասիրությանը ըստ աստվածաշնչյան պատկերացումների՝ տեսանկյան, (յուրաքանչյուր գիրքը կամ հեղինակը կամ ժանրը առանձին ուսումնասիրելով և ուրվագծելով), ապա ի հայտ են գալիս չարի վերաբերյալ տարբեր տեսանկյուններ:

   Սակայն եթե մեկը հասնում է չարի մասին ուսումնասիրությանը ոչ սուրբգրային մոտեցմամբ կամ աշխարհի ու արևելյան կրոնների հավելյալ աստվածաշնչյան մոտեցմամբ,

ապա ՆԿ-ի հիմնական զարգացումները այս թեմայի շուրջ ստվերվում են պարսկական դուալիզմով և Հունա-հռոմեական սպիրիտիզմով:

Եթե ինչ-որ մեկը գիտակցաբար վստահում է Սուրբ Գրքի աստվածային հեղինակությանը, ապա ՆԿ-ի զարգացումները պետք է դիտարկվեն որպես պրոգրեսիվ՝ զարգացող հայտնություն: Քրիստոնյաները պետք է զգուշանան հրեական ժողովրդական բանահյուսությունից՝ ֆոլկլորից կամ արևմտյան գրականությունից (Դանթե, Միլթոն), որպեսզի դրանք չխառնվեն այս հասկացության զարգացմանը: Իհարկե որոշակի առեղծված և անորոշություն կա այս բնագավառում հայտնության մեջ: Աստված ընտրել է չհայտնել չարի հետ կապված ամեն ինչ՝ դրա ծագումը, զարգացումը, նպատակը, սակայն հայտնել է դրա պարտությունը:

ՀԿ-ում «սատանա» կամ «զրպարտող» (BDB 966) տերմինը կարող է առնչվել երեք տարբեր խմբերի հետ:

1. մարդ զրպարտողներ՝ մեղադրողներ (տես՝ 1 Թագ.29:4; 2 Թագ.19:22; 3 Թագ.11:14,20,29; Սաղմ.109:6)
2. հրեշտակ զրպարտողներ (տես՝ Թվոց 22:22-23; Հոբ 1-2; Զաք.3:1)
3. դիվական զրպարտողներ (տես՝ 1 Մնաց.21:1; 3 Թագ.22:21; Զաք.13:2)

Միայն հետագայում միջաստվածաշնչային ժամանակաշրջանում է, որ Ծննդոց 3-ի օձը նույնացվում է Սատանայի հետ (տես՝ *Իմաստասիրության Գիրք 2:23-24; 2 Ենովք 31:3*), և նույնիսկ հետագայում սա դառնում է ռաբիիների կողմից նախընտրելի տարբերակ (տես՝ *Սոթ*.9բ և *Սին*.29): Ծննդոց 6-ի «Աստծո որդիները» դառնում են հրեշտակներ *1 Ենովք 54:6*-ում: Ես սա նշում եմ ոչ թե հաստատելու դրա աստվածաբանական ճշգրտությունը, այլ ցույց տալու դրա զարգացումը: ՆԿ-ում այս ՀԿ-յան գործերը բնորոշ էին հրեշտակներին, որոնք մարմնավորում էին չարին (տես՝ 2 Կորնթ.11:3; Հայտն.12:9):

Մարմնավորված չարի ծագումը՝ սկիզբը ՀԿ-ից դժվար է կամ անհնար է (կախված ձեր տեսակետից) սահմանել: Սրա պատճառներից մեկը Իսրայելի խիստ միաստվածությունն է (տես՝ 3 Թագ.22:20-22, Ժող.7:14, Ես.45:7, Ամովս 3:6): Ամեն ինչի պատճառահետևանքային դրսևորումները վերագրված են ՅԱՀՎԵԻՆ՝ ցույց տալու Նրա յուրահատկությունը և առաջնահերթությունը (տես՝ Ես.43:11, 44:6,8,24, 45:5-6,14,18,21,22):

Տեղեկությունների համար հասանելի աղբյուրներն են՝ (1) Հոբ 1-2, որտեղ Սատանան «Աստծո որդիներից» մեկն է (այսինքն՝ հրեշտակներից) կամ (2) Ես.14 և Եզեկ.28, որտեղ մերձարևելյան հպարտ թագավորները (Բաբելոնի և Տիվրոսի) գործածվում են լուսաբանելու Սատանայի հպարտությունը (տես՝ 1 Տիմ.3:6): Այս մոտեցման մեջ ինչպես երևում է ներգրավված են զգացմունքներ: Եզեկիելը կիրառում է Եդեմի Պարտեզի խորհրդապատկերները ոչ միայն Տիվրոսի թագավորի համար որպես Սատանան (տես՝ Եզեկ.28:12-16), այլ նաև Եգիպտոսի թագավորի՝ որպես Բարու և Չարի Գիտության ծառը (Եզեկիել 31): Սակայն Եսայի 14՝ մասնավորապես 12-14 համարները, կարծես թե նկարագրում է հպարտության պատճառով հրեշտակների ապստամբություն: Եթե Աստված կամենար մեզ հայտնել Սատանայի ծագումն ու նրա բնավորությունը, սա շատ անսովոր կերպ և տեղ կլիներ դրա համար: Մենք պետք է զգուշանանք սիստեմատիկ աստվածաբանության միտումից, որը վերցնում է փոքր, երկիմաստ՝ կասկածելի հատվածներ տարբեր Կտակարաններից, հեղինակներից, գրքերից և ժանրերից և դրանք համադրում որպես մեկ աստվածային գլուխկոտրուկի մասնիկներ:

Ես համամիտ եմ Ալբերտ Էդերշեյմի հետ (Albert Edersheim, *The Life and Times of Jesus the Messiah, Հիսուս Մեսիայի կյանքը և ժամանակները*, հատ.2, հավելվածներ XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]), որ ռաբբիական Հուդայականությունը մեծապես ազդվել է պարսկական դուալիզմի և դիվական խորհրդածումների կողմից: Այս բնագավառում ռաբբիները չեն կարող հանդիսանալ ճշմարտության լավագույն աղբյուրը: Հիսուսը արմատապես առանձնանում է՝ տարբերվում է, այս բնագավառում Սինագոգների մատուցած ուսմունքից: Ես կարծում եմ, որ ՅԱՀՎԵԻ հրեշտակապետ թշնամու այս հասկացությունը զարգացել է իրանական դուալիզմի երկու բարձրագույն աստվածներից՝ *Ահկիմանից* և *Օրմազայից* (Ahkiman, Ormaza), և ապա ռաբբիների կողմից կատարելագործվել որպես աստվածաշնչյան ՅԱՀՎԵԻ և Սատանայի դուալիզմի:

Անկասկած ՆԿ-ում առկա է աճող՝ առաջադիմական հայտնություն չարի մարմնավորման վերաբերյալ, բայց ոչ այնքան մանրակրկիտ ինչպես ռաբբիների մոտ: Այս տարբերության լավ օրինակներից է «երկնքում պատերազմը»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, սակայն դրանց մանրամասները տրված չեն: Անգամ այն ինչ տրված է, քողարկված է ապոկալիպտիկ ժանրով (տես՝ Հայտն.12:4,7, 12-13): Չնայած որ Սատանան պարտության մատնվեց Հիսուսի կողմից և գցվեց երկիր, նա դեռևս գործում է որպես ՅԱՀՎԵի ծառա (տես՝ Մատթ.4:1; Ղուկ. 22:31-32, 1 Կորն.5:5, 1 Տիմ.1:20):

Մենք պետք է սանձենք մեր հետաքրքրությունը այս հարցում: Փորձության ու չարիքի անձնական զորությունը առկա է, բայց ամեն դեպքում կա միայն մեկ Աստված և միևնույն է մենք ենք պատասխանատու մեր որոշումների՝ ընտրությունների համար: Գոյություն ունի հոգևոր պայքար, թե՛ փրկությունից առաջ և թե՛ հետո: Հաղթություն կարելի է միայն ունենալ և մնալ դրա մեջ Երրորդության Աստծո օգնությամբ: Չարը արդեն պարտված է և բնաջնջվելու է:

NASB, NKJV	**«անհնազանդության որդիների մեջ»**
NRSV	**«նրանց մեջ, ովքեր անհնազանդ են»**
TEV	**«մարդիկ, որոնք չեն հնազանդվում Աստծուն»**
NJB	**«ապստամբների մեջ»**

Սա եբրայերեն դարձվածք է ապստամբ և դրա մեջ մնացող բնավորության համար (տես՝ Եփես. 5:6):

2:3 «մենք բոլորս էլ մի ժամանակ ապրում էինք / քայլում էինք» Եփեսացիներում «մենք» դերանունը վերաբերում է հրեա հավատացյալներին, այս դեպքում՝ Պողոսին և նրա ծառայողական թիմին: Այս արտահայտության վերջաբանը՝ «ուրիշների նման», հավանական է դարձնում, որ այն վերաբերում է ՀԿ-յան ամբողջ ընտրյալ ժողովրդին՝ հրեաներին: Այս բայը անորոշ կատարյալ կրավորական սահմանական է: Կրավորական սեռը շեշտադրում է, որ ընկած մարդկությունը շահարկվում էր դրսի չար հոգևոր ուժերի կողմից՝ ինչպես սատանան կամ դիվական աշխարհը, որը նշվում է Եփես. 2:2 և 3:10, 6:12-ում:

NASB, NKJV	**«մեր մարմնավոր ցանկություններով»**
NRSV	**«մեր մարմնի կիրքերով»**
TEV	**«մեր բնական ցանկությունների համաձայն»**
NJB	**«զգայական կյանքերով»**

Սա ընկած մարդկության երրորդ թշնամին է: Չնայած որ Եփես. 2:2-ում նշված մյուս երկու թշնամիների հետ այն չի թվարկվում քերականորեն զուգահեռ կազմությամբ («համաձայն. . .»), այնուհանդերձ այն աստվածաբանորեն համազոր է դրանց: Մարդկության ընկած, եսակենտրոն էությունը (տես՝ Ծննդոց 3) համարվում է հենց իր ամենավատ թշնամին (տես՝ Գաղ. 5:19-21): Այն պտտում և շահարկում է ամեն ինչ և բոլորին իր իսկ շահի համար (տես՝ Հռոմ. 7:14-25):

Պողոսը գործածում է «մարմին» տերմինը երկու տարբեր կերպերով: Միայն համատեքստը կարող է որոշել այդ տարբերությունը: Եփես. 2:11,15, 5:29,31, 6:5 և 12-ում նշանակում է «մարդկային անձը» ոչ թե «ընկած մեղավոր էությունը» ինչպես որ այստեղ է: Տե՛ս Հատուկ Թեմա. Մարմին (*sarx*), Կող. 1:22-ում:

NASB	**«անձնատուր լինելով մարմնի և մտքի ցանկություններին»**
NKJV	**«մարմնի և մտքի ցանկությունները կատարելով»**
NRSV	**«հետևելով մարմնի և զգացմունքների ցանկություններին»**
TEV	**«և անում էինք մեր մարմինների և մտքերի ցանկությունների համեմատ բաներ»**

NJB	**«ամբողջությամբ մեր սեփական ֆիզիկական ցանկություններով և գաղափարներով տարված»**

Սա Ներկա Ներգործական դերբայ է, որը շեշտադրում է շարունակվող, կրկնվող, սովորույթ դարձած գործողություն: Մարդկային մարմինը և միտքը ինքնին չար չեն, սակայն փորձության և մեղքի համար պատերազմի դաշտ են (տես՝ Եփես.4:17-19, Հռոմեացիների 6 և 7):

❖ **«բնությամբ»** Սա վերաբերում է մարդկության մեղավոր՝ ընկած, Ադամական հակումներին (տես՝ Ծննդոց 3, Սաղմ.51:5, Հոբ 14:4, Հռոմ.5:12-21, 7:14-25): Զարմանալի է, որ ռաբբիները ընդհանրապես Ծննդոց 3-ում չեն շեշտադրում մարդկության անկումը: Դրա փոխարեն նրանք պնդում են, որ մարդկությունն ունի երկու նպատակ (*yetzers*)՝ մեկը բարի, մյուսը՝ չար: Մարդկանց գերիշխում է իրենց ընտրությունները: Գոյություն ունի մի շատ հայտնի ռաբբիական առակ՝ «Ամեն մարդ ունի սև և սպիտակ շուն իր սրտում: Որին որ շատ է կերակրում, այն էլ ավելի շատ է մեծանում»: Սակայն ՆԿ-ը ներկայացնում է մի քանի աստվածաբանական պատճառներ մարդկության մեղքի համար՝ (1) Ադամի անկումը, (2) կամայական անտարբերությունը, (3) մեղավոր որոշումներ:

❖ **«բարկության որդիներ»** «...որդիներ», ինչպես և «...զավակներ» խոսքը եբրայական դարձվածքային արտահայտություն է մարդու բնավորության համար: Աստված հակառակվում է Իր ստեղծագործության մեջ առկա մեղքին և ապստամբությանը: Աստծո բարկությունը թե՛ ժամանակավոր է (ժամանակի մեջ) և թե՛ էսկատոլոգիական / վախճանաբանական (վերջին ժամանակներին):

NASB	**«ճիշտ ինչպես ուրիշները»**
NKJV	**«ստիպեց միասին նստելու»**
NRSV, TEV	**«բոլորի պես»**
NJB	**«ինչպես աշխարհում մյուսները»**

Սա վերաբերում է բոլոր մարդկանց կորած լինելուն, թե՛ հրեայի, և թե՛ Հեթանոսի (տես՝ Հռոմ. 1:18-3:21): Պողոսը օգտագործում է «մյուսները» տերմինը, նկատի ունենալով կորած մարդկանց (տես՝ 1 Թեսաղ.4:13, 5:6):

2:4 «Բայց Աստված, որ առատ է ողորմությամբ, Իր մեծ սիրո պատճառով, որով մեզ սիրեց» Եփես.2:1-3-ում մեղավոր մարդկության անհույս և անօգնական վիճակից դեսի Եփես.2:4-7-ում Աստծո սքանչելի շնորհքի և ողորմության միջև գոյություն ունի մի այնպիսի՛ դրամատիկ անցում:

Ինչպիսի՛ հրաշալի ճշմարտություն է: Աստծո ողորմությունն ու սերը փրկության համար բանալիներ են (տես՝ Եփես.2:7): Նրա գթառատ բնավորությունն է (տես՝ Ելից 34:6, Նեեմ.9:17, Սաղմ .86:15, 103:8, 145:8-9, Եփես.1:7,18, 2:7, 3:8,16), և ոչ թե մարդու գործերը, որ առաջարկում է արդարության ճանապարհը (տես՝ Հռոմ.3:21-31): Տե՛ս Եփես.1:7-ում «ճոխություններ» խոսքի գրառումը:

Կարևոր է, որ Աստծո շնորհքի վերաբերյալ այս համարը պարունակում է ներկա ժամանակի դերբայ և անորոշ կատարյալ ներգործական սեռի սահմանական եղանակ: Աստված սիրել է մեզ անցյալում (տես՝ Հովի.3:16, 1 Հովի.4:9-10) և շարունակում է սիրել մեզ (տես՝ 1 Հովի.4:7-8, 16):

2:5 «նույնիսկ երբ հանցանքների մեջ մեռած էինք» Այս արտահայտությունը զուգահեռ է Եփես. 2:1ա-ին: Պողոսը փակագծերում հայտնած իր մտքից հետո (տես՝Եփես.2:1-3) վերադառնում է իր սկզբնական մտքին՝ մարդկության կորած վիճակի վերաբերյալ: Մեր կարիքի մեջ Աստված գործեց Իր սիրով (տես՝ Հռոմ.5:6,8):

❖ **«մեզ կենդանացրեց Քրիստոսի հետ միասին»** Հայերեն այս արտահայտությունն արտացոլում է հունարեն մի բառ (*suzōpoieō*): Սա Եփես.2:1-ում սկսվող նախադասության (անորոշ կատարյալ ներգործական սահմանական) գլխավոր բայն է: Սա երեք բաղադրյալ անորոշ կատարյալ բայերից առաջինն է հունարեն *syn* նախածանցով, որը նշանակում էր «համամասնակից ...հետ»: Հիսուսը

մեռելներից հարություն էր առել Եփես. 1:20-ում, իսկ հավատացյալները Նրա միջոցով կենդանացան հոգևոր կյանքի համար (տես՝ Կող. 2:13, 3:1): Հավատացյալներն այժմ ճշմարտապես կենդանի են Քրիստոսի հետ միասին: Մենք հիմա ապրում ենք հարուցյալ կյանքով: Մահը՝ վերջին թշնամին, պարտվել է (տես՝ 1 Կորնթ. 15):

2:5,8 «շնորհքով եք փրկվել» Սա Վաղակատար կրավորական այլաբանական դերբայ է, ընդգծելու համար կրկնվում է Եփես. 2:8-ում: Սա նշանակում է, որ հավատացյալները փրկվել են անցյալում, դրսից մեկի կողմից, մնայուն արդյունքով՝ «նրանք փրկվել են և շարունակում են փրկվել Աստծո միջոցով»: Այս նույն կազմությունը կրկնվում է Եփես. 2:8-ում շեշտադրության համար: Տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 1:7-ում:

Սա սուրբգրային շատ հատվածներից մեկն է, որը հավատացյալի վստահության վարդապետության համար հիմք է ձևավորում (տես՝ Հովհ. 6:37, 39, 10:28, 17:2,24, 18:9, Հռոմ. 8:31-39): Բոլոր մյուս սուրբգրային վարդապետությունների պես այն պետք է հավասարակշռված լինի (լարվածության մեջ պահվի) այլ ճշմարտությունների կամ տեքստերի հետ:

2:6 «Նրա հետ մեզ հարուցեց» Սա անորոշ կատարյալ *syn* բաղադրյալների հետ երկրորդն է: Հավատացյալները արդեն իսկ Քրիստոսի հետ հարություն են առել: Մկրտությամբ նրանք թաղվել են Քրիստոսի հետ (տես՝ Կող. 2:12, Հռոմ. 6:3-11) և Նրա հետ հարություն են առել Հոր միջոցով (տես՝ Կող. 2:13, Հռոմ. 6:4-5) որը հարություն տվեց Հիսուսին (Հռոմ. 8:11-ում հարություն առավ Հոգուց): Սրանք հատուկ փրկության հետ կապված անալոգիաներ են: Հավատացյալները հոգևորապես մասնակից են դառնում Հիսուսի փորձառության կարևորագույն դեպքերին՝ խաչելությունը, մահը, թաղումը, հարությունը և գահակալումը: Հավատացյալները բաժնեկցում են Նրա կյանքը և չարչարանքը՝ նրանք նաև բաժնեկցելու են Նրա փառքը (տես՝ Հռոմ. 8:17):

NASB, NRSV	**«Նրա հետ նստեցրեց»**
NKJV	**«մեզ միասին նստեցրեց»**
TEV	**«նրա հետ իշխելու»**
NJB	**«մեզ նրա հետ տեղ տվեց»**

Սա *syn* հետ կազմվող երրորդ բաղադրյալ անորոշ կատարյալ բայն է: Մեր դիրքը Նրա մեջ թե ներկայումս, և թե նաև ապագայում հաղթանակն է (տես՝ Հռոմ. 8:37): Նրա հետ նստելու հասկացությունը նշանակում է Նրա հետ իշխել: Հիսուսը Թագավորների Թագավորն է /Արքայից Արքան/ նստած Հայր Աստծո գահի վրա և հավատացյալները նույնիսկ հիմա Նրա հետ միասին իշխում են (տես՝ Մատթ. 19:28, Հռոմ. 5:17, Կող. 3:1,2, 2 Տիմ. 2:12, Հայտն. 2:26, 3:21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐԹՅԱՆ ՄԵՋ ԹԱԳԱՎՈՐԵԼ
SPECIAL TOPIC: REIGNING IN THE KINGDOM OF GOD

Քրիստոսի հետ թագավորելու հասկացությունը ավելի ընդարձակ աստվածաբանական կատեգորիայի մի մաս է, որը կոչվում է «Աստծո Թագավորություն»: Սա ծագել է Աստծո մասին որպես Իսրայելի ճշմարիտ թագավորի ՀԿ-յան հասկացությունից (տես՝ 1 Թագ. 8:7): Նա սիմվոլիկ կերպով թագավորեց (1 Թագ. 8:7, 10:17-19) Հուդայի ցեղից (տես՝ Ծնն. 49:10) և Հեսսեի ընտանիքից (տես՝ 2 Թագավորաց 7) մի ժառանգորդի միջոցով:

Հիսուսը խոստացված Մեսիայի վերաբերյալ ՀԿ-յան մարգարեության իրականացումն է: Նա բացեց Աստծո Թագավորությունը Բեթլեհեմում իր մարմնավորմամբ: Աստծո Թագավորությունը դարձավ Հիսուսի քարոզչության կենտրոնական սյունը: Թագավորությունն ամբողջությամբ եկավ Նրա մեջ (տես՝ Մատթ. 10:7, 11:13, 12:28, Մարկ. 1:15, Ղուկ. 10:9,11, 11:20, 16:16, 17:20-21):

Այնուհանդերձ Թագավորությունը նաև ապառնի ժամանակում է (էսկատոլոգիական): Այն ներկա է, սակայն չի ավարտվել (տես՝ Մատթ.6:10, 8:11, 16:28, 22:1-14, 26:29, Ղուկ.9:27, 11:2, 13:29, 14:10-24, 22:16,18): Հիսուսն առաջին անգամ եկավ որպես չարչարվող ծառա (տես՝ Ես. 52:13-53:12), որպես խոնարհ (տես՝ Զաք.9:9), սակայն Նա վերադառնալու է որպես Թագավորների Թագավոր (տես՝ Մատթ.2:2, 21:5, 27:11-14): «Թագավորելու» հասկացությունը անշուշտ այս «թագավորության» աստվածաբանության մի մասն է: Աստված թագավորությունը տվել է Հիսուսի հետևորդներին (տես՝ Ղուկ.12:32):

Քրիստոսի հետ թագավորելու հասկացությունն ունի մի քանի առանձնահատկություններ և հարցեր՝

1. Արդյո՞ք այն հատվածները, որտեղ հայտարարվում է, որ Աստված հավատացյալներին է տվել «թագավորությունը» Քրիստոսի միջոցով, վերաբերում է «թագավորելուն» (տես՝ Մատթ.5:3,10, Ղուկ.12:32):
2. Արդյո՞ք Հիսուսի խոսքերը ուղղված առաջին դարի Իր առաջին աշակերտներին՝ հրեական համատեքստում, վերաբերում է բոլոր հավատացյալներին (տես՝ Մատթ. 19:28, Ղուկ.22:28-30):
3. Արդյո՞ք այժմ՝ այս կյանքում թագավորելու վրա Պողոսի կատարած շեշտադրումը հակասում է կամ լրացնում վերը նշված տեքստերին (տես՝ Հռոմ.5:17, 1 Կորնթ.4:8):
4. Ինչպե՞ս են չարչարվողները և թագավորողները կապված իրար (տես՝ Հռոմ.8:17, 2 Տիմ .2:11-12, 1 Պետ.4:13, Հայտն.1:9):
5. Հայտնության մեջ անընդմեջ կրկնվող թեման է փառավորված Քրիստոսի թագավորությունը բաժնեկցելը, սակայն արդյո՞ք այդ թագավորությունը՝
   ա. երկրավոր է, Հայտն.5:10
   բ. հազարամյա, Հայտն.20:4-6
   գ. հավիտենական, Հայտն.2:26, 3:21, 22:5 և Դան.7:14,18,27:

NASB, NKJV, NRSV	**«երկնային *տեղերում*»**
TEV	**«երկնային աշխարհում»**
NJB	**«երկնքում»**

Այս տեղի պարագա (ոլորտային) չեզոք հոգնակի ածականը՝ «երկնային տեղերում», միայն կիրառվել է Եփեսացիներում (տես՝ Եփես.1:20, 2:6, 3:10, 6:12): Իր բոլոր կիրառությունների կոնտեքստներից պետք է, որ նկատի ունենա հոգևոր թագավորությունը, որտեղ հավատացյալները այստեղ և հիմա են ապրում, և ոչ թե երկնքում:

2:7 «գալիք դարերի մեջ» Հրեաները երկու դարաշրջանների էին հավատում՝ ներկայիս չար դարաշրջանը (Գաղ.1:4) և գալիք արդարության դարաշրջանը (տես՝ Հատուկ Թեմա Եփես.1:21-ում): Արդարության այս նոր դարաշրջանը բացվելու էր Մեսիայի Սուրբ Հոգու զորության գալստյամբ: Եփես.1:21-ում «դար» բառը եզակի թվով է, իսկ այստեղ՝ հոգնակի (տես՝ 1 Կորնթ. 2:7, Եբր.1:2, 11:3): Սա ենթադրում է, որ (1) գոյություն ունեն առնվազն երկու դարաշրջաններ կամ (2) հոգնակին սովորաբար շեշտադրում է և խոշորացնում գալիք դարաշրջանը, որը ռաբբիական դարձվածք է՝ կոչվող «մեծարման հոգնակի»: Հոգնակի թվի այս կիրառությունը սիմվոլիկ իմաստով կարելի է տեսնել այնպիսի հատվածներում, որոնք վերաբերում են անցյալ «դարերին» (տես՝ Հռոմ.16:25, 1 Կորնթ.10:11, 2 Տիմ.1:9, Տիտոս 1:2):

Որոշ գիտնականներ հավատում են, որ սա պարզապես փոխաբերություն է հավիտենության համար՝ Կոյնե աշխարհիկ հունարենում և մի քանի տեղ ՆԿ-ում այս արտահայտության կիրառության կերպի պատճառով (տես՝ Ղուկ.1:33, 55, Հովհ.12:34, Հռոմ.9:5, Գաղ.1:5, 1 Տիմ. 1:17):

❖ **«մեզ ցույց տրված (անգլ.՝ Նա ցույց տա)»** Սա անորոշ կատարյալ չեզոք սեռի ստորադասական եղանակ է: Աստված հստակ կերպով հայտնել է Իր բնավորությունը (տես՝ Եփես. 1:5-7): Այս տերմինը նշանակում է «հանրորեն ցույց տալ» (տես՝ Հռոմ. 9:17,22): Աստծո ողորմությունը և մտադրությունը Քրիստոսի մեջ հստակ հայտնվել են հրեշտակներին, մեղավոր մարդկության հանդեպ Իր վերաբերմունքի միջոցով (տես՝ Եփես. 3:10, 1 Կորնթ. 4:9):

❖ **«զարմանալի»** *Huperballō:* Տես՝ Հատուկ Թեմա. Պողոսի կողմից *Huper* բաղադրյալների կիրառությունը, Եփես. 1:19-ում:

2:8 «Որովհետև շնորհքով» Փրկությունը Աստծո «շնորհքով» է (տես՝ Եփես. 1:3-14): Աստծո բնավորությունը հայտնվում է Նրա ողորմության միջոցով (տես՝ Եփես. 2:4-6): Հավատացյալները Նրա սիրո ավարն են: Շնորհքը լավագույնս սահմանվում է որպես Աստծո սիրույն չարժանացած և չվաստակած: Այն բխում է Աստծո էությունից Քրիստոսի միջոցով և կախված չէ սիրված անձի արժանիքից կամ վաստակից:

❖ **«դուք փրկված եք»** Սա վաղակատար կրավորական այլաբանական դերբայ է, որը կրկնություն է Եփես. 2:5-ի (տես այդ գրառումը): Շեշտադրությունն այն է, որ «հավատացյալները փրկվել են և շարունակում են փրկվել» Աստծո միջոցով:

ՀԿ-ում «փրկել» տերմինը վերաբերում է «ֆիզիկական ազատագրմանը» (տես՝ Հակոբոս 5:15): ՆԿ-ում այն ստացավ հոգևոր նշանակություն: Աստված ազատում է հավատացյալներին անկման հետևանքներից և հավիտենական կյանք է տալիս նրանց: Նա վերականգնում է Աստծո պատկերը և հնարավորություն տալիս Աստծո հետ նորից փոխհարաբերվելու:

Տես՝ Հատուկ Թեմա Եփես. 1:7-ում:

❖ **«հավատքի միջոցով»** Հավատքը վերցնում է Աստծո ձրի պարգևը Քրիստոսով (տես՝ Հռոմ. 3:22,25, 4:5, 9:30, Գաղ. 2:16, 3:24, 1 Պետ. 1:5): Մարդկությունը պետք է արձագանքի Քրիստոսի մեջ Աստծո շնորհքի և ներման՝ թողության առաջարկին (տես՝ Հովհ. 1:12, 3:16-17,36, 6:40, 11:25-26, Հռոմ. 10:9-13):

Աստված մեղավոր մարդկության հետ փոխհարաբերվում է ուխտի միջոցով: Նա միշտ հանդես գալիս նախաձեռնողի դերում և Ինքն է ներկայացնում ծրագիրն ու սահմանները գծում (տես՝ Մարկ. 1:15, Գործք 3:16,19, 20:21): Նա թույլ է տալիս, որ մեղավոր մարդկությունը մասնակից լինի իր իսկ սեփական փրկության հարցում՝ արձագանքելով Նրա ուխտի առաջարկին: Լիազորված արձագանքը՝ պատասխանը թե՛ սկզբնական և թե՛ հարատևող հավատքն է: Այն բովանդակում է ապաշխարություն, հնազանդություն, ծառայություն, երկրպագություն և հարատևություն:

«Հավատք» տերմինը ՀԿ-ում կայուն դիրքորոշման փոխաբերական ընդլայնումն է: Այն սկսեց արտահայտել այն, ինչ հաստատ է, վստահելի, ապավինելի և հավատարիմ: Այս նկարագրություններից և ոչ մեկն էլ չփրկեց մեղավոր մարդկությանը: Մարդկության վստահելիությունը կամ հավատարմությունը կամ հուսադրողականությունը չի փրկողը, այլ Աստծո: Մենք վստահում ենք Նրա խոստումներին, և ոչ թե մեր վստահելիությանը: Ուխտի հնազանդությունը բխում է երախտագիտությունից: Միշտ մեր ուշադրության կենտրոնում է Նրա հավատարմությունը, և ոչ թե հավատացյալների հավատքը: Հավատքը չի կարող փրկել որևէ մեկի: Միայն շնորհքն է փրկում, սակայն այն ընդունվում է հավատքով: Պետք չէ կենտրոնանալ հավատքի չափի վրա (տես՝ Մատթ. 17:20), այլ ում ես հավատում (Հիսուսին):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ում (נאמן)
SPECIAL TOPIC: BELIEVE, TRUST, FAITH, AND FAITHFULNESS IN THE OLD TESTAMENT (נאמן)

I. Բացման հայտարարություն

Հարկ եմ համարում ասել, որ այս աստվածաբանական տերմինի կիրառությունը, որը չափազանց կարևոր է ՆԿ-ի համար, այնքան էլ հստակ չի սահմանվում ՀԿ-ում: Անշուշտ այս բառը այնտեղ առկա է, սակայն դիտարկվում է բանալի հանդիսացող ընտրված հատվածներում և անձանց մոտ:

ՀԿ միաձուլում է՝

Ա. անհատն ու համայնքն իրար հետ

Բ. անձնական փորձառությունը և ուխտի հնազանդությունը իրար հետ

Հավատքը թե՛ անձնական փորձառություն է, և թե՛ ամենօրյա ապրելակերպ: Ավելի հեշտ է այն նկարագրել անձի մեջ քան բառապաշարով (այսինքն՝ բառային սերտողությամբ): Այս անձնական ասպեկտը լավագույնս լուսաբանվում է՝

Ա. Աբրահամի և նրա սերնդի օրինակով

Բ. Դավթի և Իսրայելի օրինակով

Այս մարդիկ հանդիպեցին՝ վերապրեցին Աստծուն և նրանց կյանքերը մշտապես փոխվեցին (անկատար, սակայն հարատևող հավատքի կյանքեր): Փորձությունները ի հայտ բերեցին Աստծո հետ իրենց հավատքի վերապրումների տկարություններն ու առավելությունները, սակայն մտերմիկ, վստահության փոխհարաբերությունը շարունակվեց ժամանակի ընթացքում: Այդ հավատքը փորձվեց և զտվեց, սակայն շարունակեց մնալ որպես նրանց նվիրումի և ապրելակերպի ապացույց:

II. Կիրառվող հիմնական արմատը

Ա. אמן (BDB 52)

1. ԲԱՅ

ա. *Qal* բխում է՝ աջակցել, սնուցել (այսինքն՝ 4 Թագ.10:1,5; Եսթ.2:7, աստվածաբանական կիրառությունից դուրս)

բ. *Niphal* բխում է՝ համոզվել կամ հաստատ իմանալ, հաստատել, հիմնավորել, հավատարիմ կամ վստահելի լինել՝

(1) մարդկանց՝ Եսայի 8:2; 53:1; Երեմ.40:14

(2) իրերին՝ Եսայի 22:23

(3) Աստծուն՝ 2 Օր.7:9; Եսայի 49:7; Երեմ.42:5

c. *Hiphil* բխում է՝ հաստատ կանգնել, հավատալ, վստահել.

(1) Աբրահամը հավատաց Աստծուն՝ Ծննդ.15:6

(2) Եգիպտոսում Իսրայելացիները հավատացին՝ Ելից 4:31; 14:31 (բացասումը՝ 2 Օր.1:32)

(3) Իսրայելացիները հավատացին, որ ՅԱՀՎԵՆ Մովսեսի միջոցով խոսեց իրենց՝ Ել.19:9; Սաղմ.106:12,24

(4) Աքազը չվստահեց Աստծուն՝ Ես.7:9

(5) Ով որ հավատա նրան/դրան՝ Եսայի 28:16

(6) Հավատալ Աստծո վերաբերյալ ճշմարտություններին՝ Ես.43:10-12

2. ԳՈՅԱԿԱՆ (ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ) – հավատարմություն (այսինքն՝ 2 Օր.32:20; Ես.25:1; 26:2)

3. ՄԱԿԲԱՅ – ճշմարտապես, ճշմարիտ, համամիտ եմ, թող այդպես լինի (տես՝ 2 Օր.27:15-26; 3 Թագ.1:36; 1 Մնաց.16:36; Ես.65:16; Երեմ.11:5; 28:6): Սա եկեղեցական «ամեն» բառի կիրառությունն է ՀԿ-ում և ՆԿ-ում:

Բ. אמת (BDB 54) ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆ՝ հաստատություն, հավատարմություն, ճշմարտություն

1. մարդկանց՝ Ես.10:20; 42:3; 48:1

2. Աստծուն՝ Ելից 34:6; Սաղմ.117:2; Ես.38:18,19; 61:8

3. Ճշմարտությանը՝ 2 Օր.32:4; 3 Թագ.22:16; Սաղմ.33:4; 98:3; 100:5; 119:30; Երեմ.9:5; Զաք.8:16

Գ. אמונה (BDB 53), հաստատություն, հարատևություն, նվիրվածություն

1. ձեռքերին՝ Ելից 17:12

2. ժամանակներին՝ Ես.33:6
3. մարդկանց՝ Երեմ.5:3; 7:28; 9:2
4. Աստծուն՝ Սաղմ.40:11; 88:12; 89:1,2,5,8; 119:138

III. Այս ՀԿ-յան հասկացության կիրառությունը Պողոսի կողմից՝

Ա. Պողոսը հիմնավորում է ՅԱՀՎԵի և ՀԿ-ի վերաբերյալ իր նոր հասկացությունը Դամասկոսի ճանապարհին Հիսուսի հետ ունեցած իր անձնական փորձառությամբ (տես՝ Գործք 9; 22; 26):

Բ. Նա ՀԿ-ի երկու կարևոր հատվածներից, որոնք օգտագործում են אמן արմատը, գտավ հիմք իր այս նոր հասկացության համար.

1. Ծնն.15:6 – Աստծո կողմից նախաձեռնած Աբրահամի անձնական փորձառությունը (Ծննդոց 12) պատճառ հանդիսացավ հավատքի հնազանդության կյանքի (Ծննդոց 12-22): Պողոսն այս մասին ակնարկում է Հռոմեացիների 4 և Գաղատացիների 3 գլուխներում:
2. Եսայի 28:16 – նրանք, ովքեր հավատացին դրան (այսինքն՝ Աստծո կողմից փորձված և հաստատված անկյունաքարը) երբեք չեն՝
   ա. Հռոմ.9:33, «մնա ամոթով» կամ «հիասթափվի»
   բ. Հռոմ.10:11, վերը նշվածի պես
3. Ամբ. 2:4 - ովքեր ճանաչում են հավատարիմ Աստծուն պետք է ապրեն հավատարմության կյանքով (տես՝ Երեմ.7:28): Պողոսն օգտագործում է այս տեքստը Հռոմ.1:17 և Գաղ.3:11-ում (նաև՝ Եբր.10:38):

IV. Այս ՀԿ-յան հասկացության կիրառումը Պետրոսի կողմից.

Ա. Պետրոսը համադրում է՝

1. Ես.8:14 – 1 Պետ.2:8 (գլորման վեմ՝ քար)
2. Ես.28:16 – 1 Պետ.2:6 (անկյունաքար)
3. Սաղմ.118:22 – 1 Պետ.2:7 (անարգված քար)

Բ. Նա դիմում է յուրօրինակ լեզվի, որը նկարագրում է Իսրայելին՝ «ընտրյալ ժողովուրդ, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, Աստծո սեփական ժողովուրդ», վերցնելով՝

1. 1 Օր.10:15; Ես.43:21
2. Ես.61:6; 66:21
3. Ելից 19:6; 2 Օր.7:6

Եվ հիմա այն կիրառում է Քրիստոսի վրա եկեղեցու ունեցած հավատքի համար (1 Պետ. 2:5,9):

V. Այս հասկացության կիրառումը Հովհաննեսի կողմից.

Ա. ՆԿ-յան կիրառությունը

«Հավատացին» տերմինը հունարենի (*pisteuō*) տերմինից է, որը կարող է նաև թարգմանվել «հավատալ», «հավատք» կամ «վստահություն»: Օրինակ, ԳՈՅԱԿԱՆԸ Հովհաննեսի Ավետարանում չի հանդիպում, սակայն ԲԱՅԸ հաճախ է օգտագործվում: Հովհաննես 2:23-25-ում Հիսուս Նազովրեցու հանդեպ, որպես Մեսիայի, ամբոխի ցուցաբերած նվիրումի մեջ անկեղծության անորոշություն կա: «Հավատալ» տերմինը մակերեսորեն կիրառելու այլ օրինակներից են՝ Հովհ.8:31-59 և Գործք 8:13, 18-24: Իրական աստվածաշնչյան հավատքը ավելին է, քան ներքին արձագանքը: Դրան պետք է հետևի աշակերտության գործընթացը (տես՝ Մատթ.13:20-22,31-32):

Ա. ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ կիրառությունը

1. *eis* նշանակում է /դեպի/ «մեջ»: Այս յուրօրինակ քերականական կառուցվածքը շեշտադրում է հավատացյալների հավատքը՝ վստահությունը, որ դնում են Հիսուսի մեջ՝
   ա. Նրա անվան մեջ (Հովհ.1:12; 2:23; 3:18; 1 Հովհ.5:13)

բ. Նրա մեջ (Հովհ.2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45, 48; 12:37,42; Մատթ.18:6; Գործք 10:43; Փիլ.1:29; 1 Պետ.1:8)
գ. Իմ մեջ (Հովհ.6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)
դ. Որդու մեջ (Հովհ.3:36; 9:35; 1 Հովհ.5:10)
ե. Հիսուսի մեջ (Հովհ.12:11; Գործք 19:4; Գաղ.2:16)
զ. Լույսի մեջ (Հովհ.12:36)
է. Աստծո մեջ (Հովհ.14:1)

2. *en* նշանակում է «մեջ», ինչպես Հովհ.3:15; Մարկ.1:15; Գործք 5:14
3. *epi* նշանակում է «մեջ» կամ «վրա» ինչպես Մատթ.27:42; Գործք 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռոմ.4:5, 24; 9:33; 10:11; 1 Տիմ.1:16; 1 Պետ.2:6
4. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ առանց ՆԱԽԴԻՐի, ինչպես Գաղ.3:6; Գործք 18:8; 27:25; 1 Հովհ.3:23; 5:10
5. *hoti*, որը նշանակում է «հավատալ որ» տալիս է այն բովանդակությունը, թե ինչին հավատալ՝

ա. Հիսուսը Աստծո Սուրբն է (Հովհ.6:69)
բ. Հիսուսը ԵՍ ԵՄն է (Հովհ.8:24)
գ. Հիսուսը Հոր մեջ է և Հայրը՝ Նրա մեջ (Հովհ.10:38)
դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ.11:27; 20:31)
ե. Հիսուսը Աստծո Որդին է (Հովհ.11:27; 20:31)
զ. Հիսուսը ուղարկվել է Հոր կողմից (Հովհ.11:42; 17:8,21)
է. Հիսուսը Հոր հետ մեկ է (Հովհ.14:10-11)
ը. Հիսուսը Հորից եկավ (Հովհ.16:27,30)
թ.Հիսուսը իրեն հավասարեցրեց Հոր ունեցած Ուխտի անվան հետ՝ «ԵՍ ԵՄ» (Հովհ.8:24; 13:19)
ժ. Մենք նրա հետ ենք ապրելու (Հռոմ.6:8)
ի. Հիսուսը մահացավ և հարություն առավ (1 Թեսաղ. 4:14)

IV. Եզրակացություն.

Ա. Աստվածաշնչյան հավատքը պատասխանն է աստվածային խոսքին՝ խոստմանը: Աստված է միշտ նախաձեռնողը (այսինքն՝ Հովհ.6:44,65), սակայն այս աստվածային կապի մի մասը մարդկանց կողմից պատասխանելու անհրաժեշտությունն է (այսինքն՝ տես <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ</u>):

1. ապաշխարություն (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ</u>)
2. հավատք՝ վստահություն (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏՔ, ՀԱՎԱՏԱԼ ԿԱՄ ՎԱՏԱՀԵԼ</u>)
3. հնազանդություն

Բ. Աստվածաշնչյան հավատքը՝

1. անձնական փոխհարաբերություն է (ներքին հավատք)
2. աստվածաշնչյան ճշմարտության հաստատումն է (հավատք Աստծո հայտնության վրա, այսինքն՝ Սուրբ Գիրքը)
3. պատշաճ պատասխան՝ Խոսքի հնազանդությամբ (ամենօրյա հավատարմություն)

Աստվածաշնչյան հավատքը երկնքի տոմս չէ կամ էլ ապահովագրության միջոց: Այն անձնական փոխհարաբերություն է: Սա է արարչագործության և մարդկության Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված լինելու նպատակը (տես՝ Ծննդ.1:26-27): Խնդիրը «մտերմությունն» է: Աստված ցանկանում է հաղորդակցություն և ոչ թե ինչ-որ աստվածաբանական մոտեցումներ: Բայց սուրբ Աստծո հետ հաղորդակցությունը պահանջում է, որ Աստծո զավակները ցուցաբերեն «ընտանեկան» վարքագիծ (այսինքն՝ սրբություն, տես՝ Ղևտ.19:2; Մատթ.5:48; 1 Պետ.1:15-16): Անկումը (տես՝ Ծննդոց 3) ազդեց մեր ճիշտ կերպով արձագանքելու կարողության վրա: Հետևաբար, Աստված մեր կողմից գործեց (տես՝ Եզեկ.36:27-38), մեզ «նոր սիրտ» և

«նոր հոգի» տալով, որը մեզ հնարավորություն է տալիս Նրա հետ հավատքի և ապաշխարության միջոցով հաղորդակցվել և հնազանդվել:

Բոլոր երեքն էլ կարևոր են: Բոլոր երեքն էլ պետք է պահպանվեն: Նպատակը Աստծուն ճանաչելն է (թե՛ հունարեն և թե՛ եբրայերեն իմաստով) և Նրա բնավորությունը մեր կյանքում արտացոլելը: Հավատքի նպատակը ինչ-որ մի օր երկինք հասնելը չէ, այլ ամեն օր Քրիստոսի նման լինելը:

Գ. Մարդկային հավատարմությունը Աստծո հետ փոխհարաբերության հետևանքն է (ՆԿ) և ոչ թե հիմքը (ՀԿ). մարդկության հավատքը Նրա հավատարմությանը, մարդկության վստահությունը Նրա վստահելիությանը: Փրկության վերաբերյալ ՆԿ-ի կենտրոնական կարծիքն այն է, որ մարդիկ պետք է նախաձեռնող Աստծո՝ Քրիստոսի միջոցով ցուցաբերված շնորհքին և ողորմությանը սկզբից պատասխանեն և հարատևեն դրա մեջ: Նա է սիրել, Նա է ուղարկել, Նա է ապահովել, իսկ մենք պետք է պատասխանենք հավատքով և հավատարմությամբ (տես՝ Եփ.2:8-10):

Հավատարիմ Աստվածն ուզում է հավատարիմ ժողովուրդ, որպեսզի Իրեն հայտնի անհավատ աշխարհին և նրանք անձնապես հավատան Իրեն:

❖ **«և սա»** Սա հունարեն ցուցական դերանուն է (*touto*), որը չեզոք սեռի է պատկանում: Ամենամոտ գոյականները՝ «շնորհքը» և «հավատքը», երկուսն էլ իգական սեռի են: Հետևաբար սա պետք է որ վերաբերի մեր փրկության ամբողջ գործընթացին Քրիստոսի ավարտած գործում:

Մեկ այլ հավանականություն կա, որ հիմնված է միևնույն քերականական կազմության վրա Փիլ.1:28-ում: Եթե այդպես է, ուրեմն այս մակբայական արտահայտությունը կապ ունի հավատքի հետ, որը նույնպես Աստծո շնորհքի մի պարգև է: Ահա Աստծո ինքնիշխանության և մարդու ազատ կամքի առեղծվածը՝ խորհուրդը:

❖ **«ոչ թե ձեզնից է»** Սա երեք արտահայտություններից առաջինն է, որը հստակ ցույց է տալիս, որ փրկությունը հիմնված չէ մարդկային գործերի վրա՝ (1) «ձեզնից չէ» Եփես.2:8, (2) «Աստծո պարգևն է», Եփես.2:8 և (3) «ո՛չ թե գործերից» Եփես.2:9:

❖ **«Աստծո պարգևն է»** Սա շնորհքի բուն էությունն է՝ սեր առանց պայմանների (տես՝ Հռոմ.3:24, 6:23): Փրկության պարադոքսը որպես թե՛ ձրի պարգև և թե՛ լիազորված ուխտի պատասխան, դժվար է ընկալել: Մինչդեռ երկուսն էլ ճիշտ են: Փրկությունը իրոք ձրի է, մինչդեռ արժեցավ ամեն ինչ: Սուրբգրային շատ վարդապետություններ ներկայացվում են որպես խրթին՝ լարվածությամբ լի ճշմարտությունների զույգեր (վստահությունը ի հակադրությունը հարատևության, հավատքը ի հակադրություն գործերի, Աստծո ինքնիշխանությունը ի հակադրություն մարդու ազատ կամքի, նախասահմանությունը ի հակադրություն մարդկային արձագանքի, և գերազանցությունը ի հակադրություն ներբնակության):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԴՈՒ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՆԿ-ՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑԸ
SPECIAL TOPIC: NT EVIDENCE FOR ONE'S SALVATION

Մարդու փրկության ապացույցը հիմնված է Հիսուսով Նոր Ուխտի վրա (տես՝ Երեմ.31:31-34, Եզեկ.36:22-36).

1. Հոր բնավորությունը (տես՝ Հովհ.3:16), Որդու գործը (տես՝ 2 Կորնթ.5:21) և Սուրբ Հոգու ծառայությունը (տես՝ Հռոմ.8:14-16) ոչ թե մարդկային գործերը (տես՝ Եփես.2:8-9), ո՛չ հնազանդության համար վարձք, և ո՛չ պարզապես կանոն՝ օրենք:
2. Պարգև է (տես՝ Հռոմ.3:24, 6:23, Եփես.2:5,8-9)
3. Նոր կյանք է, նոր աշխարհայացք (տես՝ Հակոբոս և 1 Հովհաննես)

4. Գիտություն է (ավետարանը), փոխհարաբերություն (հավատք Հիսուսի հանդեպ) և նոր ապրելակերպ (Հոգով առաջնորդվող Քրիստոսանմանություն, տես՝ Եփես.1:4, 2:10) բոլոր երեքը և ոչ թե միայն մեկն առանձին:
5. 1 Հովհաննես 2:2-3-ում իրական փրկության ստուգումներ՝
   ա. մեղքը խոստովանելու հոժարակամություն (սկզբում և մշտապես), 1 Հովհ.1:9
   բ. հնազանդությունը որպես ապրելակերպ, 1 Հովհ.2:7-11
   գ. սիրո ապրելակերպ, 1 Հովհ.2:7-11
   դ. չարի վրա հաղթանակ, 1 Հովհ.2:12-14
   ե. աշխարհը թողնելը, 1 Հովհ.2:15-17
   զ. համբերատարություն, 1 Հովհ.2:19
   է. ճիշտ վարդապետություն, 1 Հովհ.2:20-24, 4:1-3

Սրանք կարող են ամփոփվել երեք ոլորտներում՝
1. վարդապետական ստուգում (հավատք Հիսուսի հանդեպ, տես՝ 1 Հովհ.2:18-25, 4:1-3, 14-16, 5:1,5,10)
2. ապրելակերպի՝ կյանքի ստուգում (հնազանդություն, տես՝ 1 Հովհ.2:3-7, 3:1-10, 22-24)
3. սոցիալական ստուգում (սեր, տես՝ 1 հովհ.2:7-11, 3:11-18, 4:7-12,16-21, 5:1-2)

Հիշե՛ք, որ ավետարանը՝
1. անձ է, որին պետք է ընդունել (անձնական փոխհարաբերություն)
2. այդ անձի վերաբերյալ ճշմարտություններ են, որոնց պետք է հավատալ
3. այդ անձի կյանքի պես ապրելու կյանք է (Քրիստոսակերպությունը նպատակ է):

2:9 «ո՛չ թե գործերից» Փրկությանը <u>չեն</u> արժանանում (տես՝ Հռոմ.3:20, 27-28, 9:11, 16, Գաղ.2:16, Փիլ.3:9, 2 Տիմ.1:9, Տիտոս 3:5): Սա ուղղակիորեն հակասում է սուտ վարդապետների վարդապետությանը:

❖ **«որպեսզի ոչ մեկը չպարծենա»** Փրկությունը Աստծո շնորհքով է, ոչ թե մարդկային ջանքերով, այնպես որ մարդուն փառավորելու ոչ մի առիթ չկա (տես՝ Հռոմ.3:27, 4:2): Եթե հավատացյալները պարծենում են, թող պարծենան Քրիստոսով (տես՝ 1 Կորնթ.1:31, մեջբերված՝ Երեմ.9:23-24-ից):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՐԾԵՆԱԼ
SPECIAL TOPIC: BOASTING

Հունարեն այս տերմինները *kauchaomai, kauchēma* և *kauchēsis* Պողոսը գործածում է երեսուն հինգ անգամ և միայն երկու անգամ գործածվում է ՆԿ-ի մյուս գրքերում (երկուսն էլ Հակոբոսի կողմից): Գերակշիռ կիրառությունը 1 և 2 Կորնթացիների թղթերում է:

Երկու հիմնական ճշմարտություններ կան պարծենալու հետ կապված՝

Ա. ոչ մի մարմին չի փառավորվելու՝ պարծենալու Աստծո առաջ (տես՝ 1 Կորնթ.1:29, Եփես.2:9)
Բ. հավատացյալները պետք է պարծենան Տիրոջով (տես՝ 1 Կորնթ.1:31, 2 Կորնթ.10:17, որը Երեմ.9:23-24-ից մեջբերում է)

Հետևաբար, գոյություն ունի տեղին և անտեղի պարծենալ՝ փառավորվել (այսինքն՝ հպարտություն):
Ա. Տեղին՝
1. փառքի հույսով (տես՝ Հռոմ.4:2)
2. Աստծով՝ Տեր Հիսուսի միջոցով (տես՝ Հռոմ.5:11)

3. Տեր Հիսուսի խաչով (այսինքն՝ Պողոսի հիմնական թեման, տես՝ 1 Կորնթ. 1:17-18, Գաղ. 6:14)
4. Պողոսը պարծենում է՝
   ա. իր ծառայությունն առանց վարձատրության է (տես՝ 1 Կորնթ. 9:15,16)
   բ. Քրիստոսից իր ունեցած իշխանությամբ (տես՝ 2 Կորնթ. 10:8,12)
   գ. այլ մարդկանց աշխատանքով չի պարծենում (ինչպես Կորնթոսում ոմանք անում էին, տես՝ 2 Կորնթ. 10:15)
   դ. իր տոհմական ժառանգությամբ (ինչպես ուրիշներն էին անում Կորնթոսում, (տես՝ 2 Կորնթ. 11:17, 12:1,5,6)
   ե. իր եկեղեցիներով՝
      (1) Կորնթոսի (2 Կորթն. 7:4,14, 8:24, 9:2, 11:10)
      (2) Թեսաղոնիկեի (տես՝ 2 Թեսաղ. 1:4)
      (3) Աստծո մխիթարության և ազատագրման վրա ունեցած իր վստահությամբ (տես՝ 2 Կորնթ. 1:12)

Բ. Անտեղի՝
1. Կապված հրեական իր ժառանգության հետ (տես՝ Հռոմ. 2:17-23, 3:27, Գաղ. 6:13)
2. Կորնթոսի եկեղեցում ոմանք պարծենում էին՝
   ա. տղամարդկանցով (տես՝ 1 Կորնթ. 3:21)
   բ. իմաստությամբ (տես՝ 1 Կորնթ. 4:7)
   գ. ազատությամբ (տես՝ 1 Կորնթ. 5:6)
3. սուտ վարդապետները փորձում էին պարծենալ Կորնթոսի եկեղեցով (տես՝ 2 Կորնթ. 11:12):

2:10 «մենք Նրա ձեռքի գործն ենք» Անգլերեն նաև հայերեն պոեմ բառը ծագել է հունարեն այս տերմինից (*poiēma*): Այս բառը ՆԿ-ում միայն երկու անգամ է օգտագործվել՝ այստեղ և Հռոմ. 1:20-ում: Սա շնորհքի մեջ հավատացյալների դիրքն է: Նրանք պարադոքսալ կերպով Նրա ավարտուն պրոդուկտն են, որը դեռևս գործընթացի մեջ է:

❖ **«Քրիստոս Հիսուսով ստեղծված»** Սա անորոշ կատարյալ կրավորական դերբայ է: Հոգին ձևավորում՝ մշակում է հավատացյալներին Քրիստոսի ծառայության միջոցով՝ Հայր Աստծո կամքի համաձայն (տես՝ Եփես. 1:3-14): Այս նոր հոգևոր ստեղծագործության գործընթացը նկարագրվում է միևնույն տերմիններով, որոնք կիրառվել են Ծննդոցում սկզբնական ստեղծագործության համար (տես՝ Ծնն. 3:9, Կող. 1:16):

❖ **«բարի գործերի համար»** Քրիստոսին հանդիպելուց հետո հավատացյալների կյանքը իրենց փրկության վկայությունն է դառնում (տես՝ Հակոբոս և 1 Հովհաննես): Նրանք փրկվում են շնորհքով՝ հավատքի միջոցով, բարի գործերի համար: Նրանք փրկվել են ծառայելու համար: Հավատքն առանց գործերի մեռած է, ինչպես և գործերն առանց հավատքի (տես՝ Մատթ. 7:21-23 և Հակոբոս 2:14-26): Փրկությունը դուռ է և ճանապարհ՝ ուղի: Հոր ընտրության նպատակն այն է, որ հավատացյալները լինեն «սուրբ և անարատ» (տես՝ Եփես. 1:4):

Պողոսի վրա հաճախ էին հարձակվում իր արմատապես ազատ ավետարանի համար, քանի որ թվում էր թե այն (ավետարանը) պաշտպանում էր անաստված ապրելակերպը: Այն ավետարանը, որը կարծես թե կապված չէ բարոյական գործերի հետ, կառաջնորդի բռնության: Պողոսի ավետարանը ազատ էր Աստծո շնորհքի մեջ, սակայն այն նաև պահաջում էր պատշաճ պատասխան՝ արձագանք, ոչ միայն առաջին անգամ ապաշխարությամբ, այլ շարունակական ապաշխարություններով: Աստվածահաճո ապրելակերպն է արդյունքը՝ պտուղը, և ոչ թե անօրինությունը: Բարի գործերը փրկության մեխանիզմը չեն, այլ արդյունքը: Կատարելապես ձրի փրկության այս պարադոքսը և

ամեն բան արժեցած պատասխանը դժվար է իրար հետ կապել, սակայն այս երկուսը պետք է պահվեն լարված հավասարակշռության մեջ:

Ամերիկյան անհատապաշտությունը աղճատել է ավետարանը: Մարդիկ չեն փրկվում, քանի որ Աստված նրանց անհատապես է սիրում, այլ նրա համար, որ Աստված սիրում է մեղավոր մարդկությանը՝ այն մարդկությանը, որն Իր պատկերով է ստեղծվել: Նա փրկում և փոխում է անհատներին, որպեսզի նրանց միջոցով ձեռք մեկնի ավելի շատ անհատների: Սիրո վերջնական կենտրոնացումը հիմնականում հավաքական տեսքով է (տես՝ Հովհ. 3:16), սակայն այն ընդունվում է անհատապես՝ անձնապես (տես՝ Հովհ. 1:12, Հռոմեացիների 10:9-13, 1 Կորնթ. 15:1):

❖ **«որոնց Աստված նախապես պատրաստեց»** Այս ուժեղ տերմինը (*pro + hetoimos*, «նախապես պատրաստել») կապված է նախասահմանության աստվածաբանական հասկացության հետ (տես՝ Եփես. 1:4-5,11) և կիրառվում է միայն այստեղ և Հռոմ. 9:23-ում: Աստված ընտրեց մի ժողովրդի, որի միջոցով արտացոլում է Իր բնավորությունը: Քրիստոսի միջոցով Հայրը վերականգնել է մեղավոր մարդկության մեջ Իր պատկերը (տես՝ Ծննդ. 1:26-27):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2:11-22

[11]Ուստի հիշեցե՛ք, որ դուք մի ժամանակ մարմնով հեթանոսներ էիք (որոնք անթլփատներ են կոչվում նրանց կողմից, ովքեր ունեն ձեռքով եղած մարմնական թլփատությունը), [12]որ այն ժամանակ առանց Քրիստոսի էիք, օտարացած Իսրայելի քաղաքակցությունից, խոստման ուխտերին օտար, այս աշխարհում առանց հույսի և առանց Աստծո: [13]Բայց հիմա Քրիստոս Հիսուսով, դուք, որ մի ժամանակ խիստ հեռու էիք, մերձավոր դարձաք Քրիստոսի արյամբ: [14]Որովհետև Նա է մեր խաղաղությունը, որ երկուսին մեկ դարձրեց և մեջտեղի բաժանման պատը քանդեց, [15]թշմանությունն Իր մարմնով կործանելով՝ կանոններով տրված պատվիրանների Օրենքը խափանեց, որպեսզի Իրենով երկուսից մի նոր մարդ ստեղծի՝ խաղաղություն հաստատելով, [16]և մեկ մարմնում խաչի միջոցով երկուսին էլ հաշտեցնի Աստծո հետ՝ դրանով թշնամությունը սպանելով: [17]Եվ եկավ ու խաղաղություն քարոզեց ձեզ, որ հեռու էիք, և նրա՛նց, որ մոտ էին: [18]Որովհետև Նրա միջոցով մենք երկուսս էլ նու՛յն Հոգով մուտք ունենք Հոր մոտ: [19]Ուրեմն այսուհետև այլևս օտար ու պանդուխտ չեք, այլ՝ սրբերի հետ համաքաղաքացիներ և Աստծո ընտանիք. [20]կառուցված առաքյալների ու մարգարեների հիմքի վրա, Հիսուս Քրիստոսը Ինքը գլխավոր անկյունաքարը լինելով, [21]Ում մեջ բոլոր կառույցը միասին հարմարված աճում է, որ լինի սուրբ տաճար Տիրոջով. [22]Նրա մեջ դուք էլ միասին կառուցվում եք որպես Աստծո բնակարան՝ Հոգու միջոցով:

2:11 «Ուստի» Սա կարող էր վերաբերել (1) Եփես. 2:1-10 կամ (2) Եփես. 1:3-2:10: Պողոսը հաճախ է կիրառում այս բառը, որպեսզի սկսի մի նոր գրականական բաժին՝ կառուցելով նախորդող բաժինների համակցված ճշմարտությունների վրա (տես՝ Հռոմ. 5:1, 8:1, 12:1):

Սա Պողոսի վարդապետական բաժնի երրորդ կարևոր ճշմարտությունն է (Եփես. 1-3): Առաջինը Աստծո հավիտենական ընտրությունն էր՝ հիմնված Իր գթառատ էության վրա, երկրորդը՝ մեղավոր մարդկության անհույս վիճակը, որը փրկվեց Աստծո ողորմած գործի միջոցով՝ Քրիստոսով կատարած, որը պետք է ընդունել և ապրել հավատքով: Այժմ երրորդը՝ Աստծո կամքը միշտ էլ եղել է բոլոր մարդկանց փրկությունը (տես՝ Ծննդ. 3:15, 12:3, Ելից 19:5), թե՛ հրեայի, և թե՛ հեթանոսի (տես՝ Եփես. 2:11-3:13): Ոչ մի մարդկային միտք (այսինքն՝ գնոստիկները) չէր կարող հասկանալ այս հայտնված ճշմարտությունները:

❖ **«հիշեցե՛ք»** Սա ներկա ժամանակի ներգործական սեռի հրամայական եղանակ է: Այս հեթանոսներին հրամայված է հիշել, որ իրենք նախկինում Աստծուց օտարացած են եղել, Եփես. 2:11-12:

❖ **«որ դուք մի ժամանակ մարմնով հեթանոսներ էիք»** Սա բառացի «ազգեր» (*ethnos*) բառն է: Այն վերաբերում է բոլոր ժողովուրդներին, ովքեր Հակոբի սերնդից չէին: ՀԿ-ում «ազգեր» (*go'im*) տերմինը բոլոր ոչ հրեաներին դիմելու նվաստացուցիչ կերպ էր:

❖ **«որոնք անթլփատներ են կոչվում»** Նույնիսկ ՀԿ-ում այս ծեսը ներքին հավատքի արտաքին մի նշան էր (տես՝ Ղևտ.26:41-42, 2 Օր.10:16, Երեմ.4:4): Գաղատացիների հուդայականները պնդում էին, որ սա դեռևս Աստծո կամքն էր և փրկության համար պարտադիր պայման էր (տես՝ Գործք 15:1բ, Գաղ.2:11-12): Սա հավանաբար ծաղրական տերմին էր: Զգուշացե՛ք չշփոթելու սիմվոլը՝ խորհրդապատկերը հոգևոր իրողության՝ դրա իրական նշանակության հետ (տես՝ Գործք 2:38 մեկ ուրիշ օրինակի համար):

2:12

NASB	**«Քրիստոսից անջատ»**
NKJV, NRSV	**«առանց Քրիստոսի»**
TEV	**«Քրիստոսից զատված»**
NJB	**«դուք չունեիք Քրիստոսին»**

Սա բառացի նշանակում է «առանձին հիմքերի վրա»: Այս հոջորդող մի քանի արտահայտությունները՝ ինչպես օրինակ Եփես.2:1-3, ցույց են տալիս հեթանոսների անօգնական և անհույս վիճակն առանց Քրիստոսի:

NASB, NJB	**«մերժված»**
NKJV, NRSV	**«օտարացած»**
TEV	**«օտարականներ»**

Սա վաղակատար կրավորական դերբայ է, որը նշանակում է «եղել են և շարունակում են մնալ մերժված»: ՀԿ-ում այս տերմինը վերաբերում էր ոչ քաղաքացի բնակիչներին, որոնք ունեին սահմանափակ իրավունքներ (օտարականներ): Հեթանոսները եղել են և շարունակում են առանձնացած, օտարացած մնալ ՅԱՀՎԵԻ Ուխտից:

❖ **«Իսրայելի քաղաքակցությունից»** Սա բառացի նշանակում է «քաղաքացիություն» (*politeia*): Այս բառը անգլերենի մեջ է ներմուծվել որպես «politics»՝ քաղաքականություն: Այն վերաբերում է Աբրահամի ընտրյալ սերունդներին: Նրանց օգուտները՝ շահը թվարկվում է Հռոմեացիների 9:4-5-ում:

❖ **«խոստման ուխտերին»** ՆԿ-ը ՀԿ-ին կարող է դիտարկել որպես մեկ ամնողջական ուխտ կամ որպես մի քանի ուխտեր: Այս աստվածաբանական լարվածությունը կարելի է դիտարկել որպես մեկ հավատքի ուխտի՝ արտահայտված (1) տարբեր պահանջների մեջ կամ (2) տրված տարբեր մարդկանց: ՀԿ-ի մարդկանց Աստված տարբեր ձևերով էր դիմակայում: Ադամին տրված Նրա խոսքը Եդեմի պարտեզի հետ էր կապված, Նոյինը՝ տապանի, Աբրահամինը՝ որդու մասին էր և վայրի, թե որտեղ պետք է ապրեն, Մովսեսին՝ մարդկանց առաջնորդելու մասին, և այլն: Բայց այս բոլորը իր մեջ բովանդակում էր Աստծո Խոսքին հնազանդություն: Որոշ խմբեր (դիսպանսերալիստները) ուշադրություն են դարձնում տարբերությունների վրա: Այլ խմբեր էլ (Կալվինիստները) կենտրոնանում են հավատքի միաբանող կողմերի վրա: Պողոսը կենտրոնացել էր Աբրահամի ուխտի վրա (տես՝ Հռոմեացիների 4) որպես հավատքի բոլոր փոխհարաբերությունների օրինակի համար գեղեցիկ միջավայր:

Նոր Ուխտը նման է հին ուխտերին Աստծո հայտնությանը հնազանդության և անձնական հավատքի պահանջներով: Այն տարբերվում է Աստծո առաջ մարդու շիտակ լինելու ձևով (տես՝ Երեմ.31:31-34): Մովսիսական ուխտը կենտրոնանում է մարդկային հնազանդության և գործերի վրա, մինչդեռ ՆԿ-ը կենտրոնանում է Քրիստոսի հնազանդության և գործերի վրա: Այս Նոր Կտակարանը, հնի պես, թե՛ առանց պայմանների է (Աստծո շնորհքի և թողության խոստումը) և թե՛ պայմանական (մարդկային արձագանքը): Այն արտացոլում է թե՛ Աստծո ինքնիշխանությունը (նախասահմանումը) և թե՛ մարդկության ազատ ընտրությունները (հավատք, ապաշխարություն, հնազանդություն, հարատևություն):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ
SPECIAL TOPIC: COVENANT

ՀԿ-ի *berith* (BDB 136) տերմինը՝ ուխտը, այնքան էլ հեշտ չէ սահմանելը: Եբրայերենում չկա դրան համապատասխան ԲԱՑԸ: Բոլոր փորձերը ստուգաբանական կամ համանման սահմանում ստանալու համար համոզիչ չեն ստացվել: Սակայն, այս հասկացության ակնհայտ կարևորությունը ստիպել է աստվածաբաններին հետազոտելու բառի գործածությունը, փորձելու սահմանել դրա գործնական՝ ֆունկցիոնալ իմաստը:

Ուխտը մի միջոց է, որով միակ ճշմարիտ Աստված գործ է ունենում մարդկանց հետ: Ուխտի, դաշնագրի կամ համաձայնագրի գաղափարը կարևոր դեր է խաղում աստվածաշնչյան հայտնությունը հասկանալու մեջ: Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի միջև ընկած լարվածությունը հստակ երևում է ուխտի հասկացության մեջ: Կան ուխտեր, որոնք հիմնված են բացառապես Աստծո բնավորության և գործողությունների վրա:

1. հենց արաչագործությունը (տես՝ Ծննդոց 1-2)
2. Աբրահամի կանչը (տես՝ Ծննդոց 12)
3. Աբրահամի հետ ուխտը (տես՝ Ծննդոց 15)
4. Նոյին պահպանելը և նրան տրված խոստումը (տես՝ Ծննդոց 6-9)

Սակայն ուխտի բնույթը ինքնին պահանջում է պատասխան՝ արձագանք:

1. հավատքով Ադամը պետք է հնազանդվի և չուտի Եդեմի պարտեզի կենտրոնի ծառից
2. հավատքով Աբրահամը պետք է հեռանա իր ընտանիքից, հետևի Աստծուն և հավատա ապագա սերունդներին
3. հավատքով Նոյը պետք է կառուցի մի հսկայական նավ, որը հեռու է ջրից և հավաքի կենդանիներին
4. հավատքով Մովսեսը Իսրայելացիներին հանեց Եգիպտոսից դեպի Սինա լեռը և ստացավ հատուկ ուղեցույցներ կրոնական և սոցիալական կյանքի համար՝ օրհնության և անեծքի խոստումներով (տես՝ 2 Օր.27-29):

Մարդկանց հետ Աստծո փոխհարաբերության մեջ ըդգրկված այս նույն լարվածությունը հաղորդվում է «նոր ուխտի» մեջ: Այդ լարվածությունը կարելի է հստակ տեսնել համեմատելով Եզեկիել 18-ը Եզեկիել 36:27-38-ի հետ (ՅԱՀՎԵի գործը): Արդյո՞ք Աստծո ողորմած գործերի վրա հիմնված ուխտը պարտադրում է մարդու արձագանքը: Սա Հին և Նոր Ուխտերի միջև գտնվող վառվող կետն է: Երկուսի նպատակն էլ նույնն են՝

1. YHWH-ի հետ փոխհարաբերության վերականգնումը, որը մարդը կորցրել էր Ծննդոց 3-ում
2. արդար ժողովուրդ բարձրացնելը, որը կարտացոլի Աստծո բնավորությունը:

Երեմ.31:31-34-ի նոր ուխտը լուծում է այս լարվածությունը՝ հեռացնելով մարդկային մասնակցությունը որպես ընդունելության արժանանալու միջոց: Աստծո օրենքը արտաքին օրինապահության փոխարեն դառնում է ներքին ցանկություն: Աստվածավախ, արդար մարդկանց նպատակը մնում է նույնը, սակայն փոխվում է մեթոդը: Անկում ապրած մարդկությունը ապացուցել էր, որ արժանի չէր լինելու Աստծո պատկերի արտացոլանքը: Խնդիրը Աստծո ուխտը չէր, այլ մարդու մեղավորությունը և տկարությունը (տես՝ Հռոմեացիների 7; Գաղատացիների 3):

ՀԿ-ի պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև եղած նույն լարվածությունը մնում է ՆԿ-ում: Փրկությունը բացարձակ ձրի է Հիսուս Քրիստոսի ավարտած գործի շնորհիվ, սակայն այն պահանջում է ապաշխարություն և հավատք (թե՛ սկզբում և թե՛ շարունակվող՝ հարատև, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ ՆԿ-ՈՒՄ</u>): Հիսուսն Իր նոր փոխհարաբերությունը հավատացյալների հետ կոչում է «նոր ուխտ»: Այն թե՛ օրենքի հայտարարություն է և թե՛ Քրիստոսի պես լինելու կոչ (տես՝ Մատթ.5:48, Հռոմ.8:29-30, 2 Կորնթ.3:18, 7:1, Գաղ.4:19, Եփես.1:4, 4:13, 1 Թեսաղ.3:13, 4:3,7, 5:23, 1 Պետ.1:15), որը մատնանշում է, որ Աստծո կողմից ընդունված ես (Հռոմեացիների 4) և պատվիրում սրբություն (Մատթեոս 5:48): Հավատացյալները չեն փրկվում իրենց վարքով, այլ հնազանդությամբ (տես՝ Եփես.2:8-<u>10</u>, 2 Կորնթ.3:5-6, Փիլ.2:12-13): Աստվածահաճո ապրելակերպը դառնում է փրկության <u>վկայություն</u>, ոչ թե փրկության <u>միջոց</u>

(այսինքն՝ Հակոբոս և 1 Հովհաննես): Այնուհանդերձ հավիտենական կյանքն ունի տեսանելի առանձնահատկություններ (հավատքի կյանքի հիման վրա վստահություն, Եբրայեցիների 11): Այս լարվածությունը հստակ երևում է ՆԿ-ի զգուշացումների մեջ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԵՐՁՎԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ):

Հարմար, համառոտ հոդվածներ պայմանական ուխտերն ի հակադրություն անպայմանական ուխտերի կարող եք գտնել՝

1. Դ. Բրենթ Սենդիի գրքում՝ *Մաճեր և մանգաղներ. Սուրբգրային Մարգարեության և վախճանաբանական լեզվի վերանայում*, էջ՝ 44-47 /D. Brent Sandy's book, *Plowshares and Pruning Hooks: Rethinking the Language of Biblical Prophecy and Apocalyptic*/.
2. Ֆ. Ֆ. Բրյուսի *Հարցերի պատասխաններ*, էջ՝ 129-130 /F. F. Bruce, *Answers to Questions*/
3. *Աստվածաշնչի խրթին խոսքերը*, էջ՝ 70-75 /*Hard Sayings of the Bible*/:

❖ **«այս աշխարհում առանց հույսի և առանց Աստծո»** Եթե իրոք կա միայն մեկ Արարիչ և Իսրայելը Նրա ընտրյալ ժողովուրդն էր, ապա հեթանոսները կտրված էին առանց հույսի, կռապաշտության և հեթանոսության մեջ մոլորված (տես՝ 1 Թեսաղ. 4:13 և Հռոմ. 1:18-2:16):

2:13 «Բայց հիմա» Հեթանոսների անհույս անցյալի՝ Եփես. 2:11-12 և ավետարանում իրենց մեծ հույսի՝ Եփես. 2:13-22 միջև հակադրություն կա:

❖ **«դուք, որ մի ժամանակ խիստ հեռու էիք, մերձավոր դարձաք»** Այս նույն հասկացությունը կրկնվում է Եփես. 2:17-ում, որը մեջբերում է Ես. 57:19-ից: Եսայի մարգարեության մեջ այս տեքստը վերաբերում էր հրեա գերիներին, սակայն այստեղ՝ Եփեսացիներին ուղղված թղթում այն վերաբերում է հեթանոսներին: Սա Պողոսի կողմից ՀԿ-ի հատվածների կիրառության տիպաբանական օրինակներից մեկն է: ՆԿ-յան առաքյալները տիեզերականացրել են ՀԿ-յան հույսը: Ինչպես որ գերեվարված հրեաներն էին առանց Աստծո, այնպես էլ հեթանոսները օտարացած էին Աստծուց:

❖ **«Քրիստոսի արյամբ»** Սա վերաբերում էր Քրիստոսի փոխանորդական քավությանը (տես՝ Եփես. 1:7, Հռոմ. 3:25, 5:6-10, 2 Կորնթ. 5:21, Կող. 1:20, Եբր. 9:14,28, 1 Պետ. 1:19, Հայտն. 1:5): Աստծո ընտանիքը այլևս ազգային չէ, այլ հոգևոր (տես՝ Հռոմ. 2:28-29, 4:16-25):

Քրիստոսի արյունը զոհաբերության փոխաբերություն էր (տես՝ Ղևտացիների 1-2) Մեսիայի մահվան համար (տես՝ TEV): Հովհաննես Մկրտիչը Հիսուսին ասաց. «Ահա Աստծո Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքը» (տես՝ Հովհ. 1:29): Հիսուսն եկավ մեռնելու (տես՝ Ծնն. 3:15, Եսայի 53, Մարկ. 10:45):

Այն նաև Հիսուսի ճշմարիտ մարդեղությունը հաստատելու մի կերպ էր (տես՝ Եփես. 2:15), որը գնոստիկները հերքում էին:

2:14 Այս համարն ունի երեք բայ: Առաջինը ներկա սահմանական է: Հիսուսը շարունակում է լինել և ապահովել մեր խաղաղությունը: Երկրորդ և երրորդ բայերը անորոշ կատարյալ ներգործական բայեր են («երկուսին մեկ դարձրեց» և «բաժանման պատը քանդեց»). ամեն ինչ որ անհրաժեշտ էր իրագործվեց, որպեսզի միաբանի հրեաներին և հեթանոսներին մի մեկ նոր հաստատություն ստեղծելով (եկեղեցին):

Այս գրականական բաժնի հիմնական թեման հրեայի և հեթանոսի միջև խաղաղությունն է՝ Եփես. 2:11-3:13: Սա ավետարանի խորհուրդն էր, որ ծածկված էր անցած դարերում: «Խաղաղություն» տերմինը վերաբերում է՝

1. Աստծո և մարդկանց միջև խաղաղությանը (տես՝ Հովհ. 14:27, 16:33, Հռոմ. 5:1-11, Փիլ. 4:7,9)
2. Հրեայի և հեթանոսի միջև խաղաղությանը՝ Եփես. 2:14, 15, 17 (տես՝ Գաղ. 3:28, Կող. 3:11):

Տե՛ս Եփես. 2:15-ում գրառումը:

❖ **«Նա /Ինքն/ է մեր խաղաղությունը»** «Նա Ինքն է» (*autos*) շեշտադրված է (տես՝ Եփես. 2:15): «Խաղաղություն» տերմինը նշանակում է «վերականգնել այն ինչ կոտրված է» (հաշտություն): Հիսուս Մեսիայի անունը Խաղաղության Իշխան է (տես՝ Ես. 9:6 և Զաք. 6:12-13): Աստծո խաղաղությունը Քրիստոսում ունի մի քանի առանձնահատկություն: Տե՛ս Եփես. 2:15-ում գրառումը և Հատուկ Թեմա. Խաղաղությունը և Քրիստոնյան, Կող. 1:20-ում:

NASB	**«ով երկու *խմբերը* դարձրեց մեկ»**
NKJV	**«ով երկուսը մեկ է դարձրել»**
NRSV	**«նա երկու խմբերը մեկի է վերածել»**
TEV	**«հրեաներին և հեթանոսներին մի ժողովուրդ դարձնելով»**
NJB	**«երկուսը մեկ է դարձրել»**

Հավատացյալներն այլևս հրեա կամ հեթանոս չեն, այլ Քրիստոնյա (տես՝ Եփես. 1:15, 2:15, 4:4, Գաղ. 3:28, Կող. 3:11): Սա Եփեսացիներում հայտնված Աստծո խորհուրդն էր: Սա միշտ էլ եղել է Աստծո ծրագիրը (Ծնն. 3:15): Աստված ընտրեց Աբրահամին, որի միջոցով ընտրեց մի ժողովուրդ՝ ընտրելու ամբողջ աշխարհին (Ծնն. 12:3, Ելից 19:5-6): Սա Հին և Նոր Ուխտերի (Կտակարանների) միավորող թեման է: Տե՛ս Հատուկ Թեմա. Ռասսիզմ, Կող. 3:11-ում:

NASB	**«բաժանող պատի արգելքը»**
NKJV	**«մեջտեղի բաժանման պատը»**
NRSV	**«բաժանող պատը»**
TEV	**«այն պատը, որը անջատում է»**
NJB	**«այն արգելքը, որը նրանց առանձնացնում էր»**

Բառացի սա նշանակում է «միջնապատ, միջնորմ»: Սա հազվադեպ տերմին էր: Համատեքստում ակնհայտ է, որ սա վերաբերում է Մովսիսական օրենքին (տես՝ հ. 15): Որոշ մեկնաբաններ պնդում են, որ այն վերաբերում էր Հերովդեսի Տաճարում Հեթանոսների սրահի և Կանանց սրահի միջև ընկած պատին, որը իրարից բաժանում էր հրեա և հեթանոս երկրպագուներին: Արգելապատերի հեռացման այս նույն սիմվոլիզմը երևում է Հիսուսի մահվան ժամանակ Տաճարի վարագույրի վերից վար պատռվելու դեպքում (տես՝ Մատթ. 27:51): Միաբանությունը այժմ հնարավոր է: Միաբանությունը այժմ Աստծո կամքն է (տես՝ Եփես. 1:10, Եփես. 4:1-10):

Գնոստիցիզմի մեջ այս տերմինը վերաբերում էր երկնքի և երկրի միջև առկա խոչընդոտին, որը հնարավոր է ակնարկվում է Եփես. 4:8-10-ում:

2:15

NASB	**«վերացնելով»**
NKJV	**«վերացրեց»**
NRSV	**«վերացրել է»**
TEV	**«կործանեց»**
NJB	**«կործանելով»**

«Վերացնել» տերմինը Պողոսի սիրելի տերմիններից է (տես՝ Հռոմ. 3:31, 6:6, Կող. 2:14): Բառացի նշանակում է «անվավեր դարձնել» կամ «անարդյունավետ դարձնել»: Սա անորոշ կատարյալ ներգործական դերբայ է: Հիսուսը կատարելապես ոչնչացրեց ՀԿ-ի օրենքի մահապատիժը (տես՝ Եփես. 2:16, Կող. 2:14, Եբր. 8:13):

Սա չի նշանակում, որ ենթադրվում է իբրև ՀԿ-ը ներշնչված և կարևոր հայտնություն չէ ՆԿ-յան հավատացյալի համար (տես՝ Մատթ. 5:17-19): Սա չի նշանակում, որ Օրենքը փրկության միջոց չէ (տես՝ Գործք 15, Հռոմեացիների 4, Գաղատացիների 3, Եբրայեցիներ): Նոր Ուխտը (Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-36) հիմնված է նոր սրտի և նոր հոգու վրա, ոչ թե օրենքի կողը պահելով մարդկային գործերի վրա: Օրենքը գործում է սրբացման հարցում, բայց ոչ արդարացման: Հավատացյալ

հրեաները և հավատացյալ հեթանոսները այժմ ունեն միևնույն դիրքը Աստծո առջև՝ Քրիստոսի ներդրած արդարությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՎԱՎԵՐ ԴԱՐՁՆԵԼ (*katargeō*)
SPECIAL TOPIC: NULL AND VOID (*katargeō*)

Այս (*katargeō*) տերմինը Պողոսի սիրելի տերմիններից է: Նա առնվազն քսանհինգ անգամ գործածել է այն, սակայն այս տերմինն ունի շատ ընդարձակ իմաստաբանական շարք:

Ա. Նրա հիմնական ստուգաբանական արմատը *argos* է, որը նշանակում է.
1. Անգործունակ՝ իներտ
2. Պարապ՝ դատարկ
3. Չօգտագործվող
4. Անօգուտ
5. Չաշխատող

Բ. Բաղադրյալ բառը *kata* բառի հետ կիրառվում էր արտահայտելու՝
1. Անգործունակություն
2. Անօգտակարություն
3. Անվավեր մի բան
4. Անպետք մի բան
5. Ընդհանրապես չաշխատող մի բան

Գ. Այս տերմինը մի անգամ գործածվում է Ղուկասում, նկարագրելու անպտուղ՝ հետևաբար անօգտակար ծառի (տես՝ Ղուկ.13:7):

Դ. Պողոսը գործածում է այս տերմինը փոխաբերական իմաստով՝ երկու հիմնական կերպերով.
1. Աստված ստեղծում է անգործունակ բաներ, որոնք թշնամի են մարդկությանը
   ա. Մարդկության մեղավոր էությունը՝ Հռոմ.6:6
   բ. Մովսիսական օրենքը Աստծո կողմից «սերմի» մասին տրված խոստման հետ կապված՝ Հռոմ.4:14; Գաղ.3:17; 5:4,11; Եփես.2:15
   գ. Հոգևոր ուժերը՝ 1 Կորնթ.15:24
   դ. «Անօրենության մարդը»՝ 2 Թեսաղ.2:8
   ե. Ֆիզիկական մահը՝ 1 Կորնթ.15:26; 2 Տիմ.1:10 (Եբր.2:14)
2. Աստված փոխարինում է հինը (ուխտը, դարաշրջանը) նորով՝
   ա. Մովսիսական օրենքի հետ կապված բաներ՝ Հռոմ.3:3,31; 4:14; 2 Կորնթ.3:7,11,13,14
   բ. Օրենքի վերաբերյալ կիրառված ամուսնության համանմանությունը՝ Հռոմ.7:2,6
   գ. Այս դարաշրջանի հետ կապված բաները՝ 1 Կորնթ.13:8,10,11
   դ. Այս մարմինը՝ 1 Կորնթ.6:13
   ե. Այս դարի առաջնորդները՝ 1 Կորնթ.1:28; 2:6

Այս բառը թարգմանված է շատ տարբեր կերպերով, սակայն դրա հիմնական նշանակությունն է ինչ-որ բան անպիտան, անօգուտ, անգործ, անզոր, անվավեր դարձնելը, բայց պարտադիր չէ վերացնել կամ բնաջնջելը:

NASB, NKJV	**«Իր մարմնում»**
NRSV (2:14)	**«մարմին»**
TEV (2:14)	**«իր իսկ մարմնի մեջ»**
NJB (2:14)	**«իր իսկ անձի մեջ»**

Սա շեշտադրում է Հիսուսի մարդեղությունը (տես՝ Կող.1:22) ինչպես նաև Նրա մարմնով կատարած ծառայությունը (տես՝ Եփես.4:8-10): Գնոստիկ սուտ վարդապետները ուրանում էին երկուսն էլ իրենց գոյաբանական այն դուալիզմի պատճառով, որը գոյություն ուներ հոգու, որը դիտարկում էին որպես բարի, և մատերիայի, որը դիտարկում էին որպես չար, միջև: Տե՛ս

Եփեսացիների Ներածական բաժնի «Սուտ վարդապետների (Գնոստիցիզմի) փիլիսոփայական և աստվածաբանական հիմքը» (տես՝ Գաղ. 4:4, Կող. 1:22):

❖ **«թշնամությունը»** Հավասարակշռված ստրուկտուրան հավասարեցնում է «թշնամությունը» (տես՝ Եփես. 2:16) «հրամանագրերում առկա պատվիրանների Օրենքի» հետ: ՀԿ-ը ասում էր «արա՛ և ապրի՛ր», սակայն մեղավոր մարդկությունը ի զորու չէր կատարելու Մովսեսի Օրենքը: Երբ խախտվում էր, ՀԿ-ի օրենքները դառնում էին անեծք (տես՝ Գաղ. 3:10), «այն անձը, որ մեղանչում է, անշուշտ պետք է մեռնի» (տես՝ Եզեկ. 18:4,20): Նոր Ուխտը հեռացրեց թշնամությունը՝ մարդկանց տալով նոր սիրտ, նոր միտք և նոր հոգի (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:26-27): Գործերը արդյունքն են և ոչ թե նպատակը: Փրկությունը պարգև է, ոչ թե գործեր կատարելու համար վարձք:

NASB	**«կանոններով տրված պատվիրանների Օրենքը»**
NKJV	**«կանոններում շարունակվող պատվիրանների օրենքը»**
NRSV	**«օրենքը իր պատվիրաններով և կանոններով»**
TEV	**«Հրեական Օրենքը իր պատվիրաններով և կանոններով»**
NJB	**«Օրենքի կանոններն ու հրամանները»**

Սա վերաբերում էր փրկության այն կերպին, որը կարծում էին, որ կարելի էր գտնել միայն Մովսեսի Օրենքը կատարելով (տես՝ Հռոմ. 9:30-32, Գաղ. 2:15-21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՎՍԻՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱՆ
SPECIAL TOPIC: THE MOSAIC LAW AND THE CHRISTIAN

Ա. Օրենքը ներշնչված գիր է և հավիտենական է (տես՝ Մատթ. 5:17-19):

Բ. Օրենքը որպես փրկության կերպ զուր է և միշտ էլ զուր է եղել, սակայն մարդկությունը պետք է տեսներ, որ իր սեփական ջանքերը իզուր՝ անօգուտ են (տես՝ Մատթ. 5:20, 48, Հռոմ. 7:7-12, Գաղ. 3:1բ, Հակոբոս 2:10):

Գ. Քրիստոսի ավետարանը Աստծուն հասնելու միակ ճանապարհն է (տես՝ Հովհ. 14:6, Հռոմ. 3:21, Գաղ. 2:15-21, Եբր. 8:12):

Դ. Հին Կտակարանը դեռևս օգտակար է հավատացյալներին, որպես հասարակության մեջ ապրող մարդկանց համար Աստծո կամքը (հտկպ՝ «Տաս Պատվիրանները»), սակայն ոչ որպես փրկության միջոց (այսինքն՝ այն գործում է սրբացման համար, այլ ոչ թե արդարացման): Իսրայելի պաշտամունքները (զոհաբերության համակարգը, սուրբ օրերը, քաղաքացիական և կրոնական օրենքները) անցել են, սակայն դեռևս խոսում է ՀԿ-ի միջոցով: Գործք 15:20-ում նշված պայմանները վերաբերում են միայն հաղորդակցության խնդիրներին և ոչ թե փրկությանը:

Ե. ՀԿ-ի վերաբերյալ կարևոր տեքստերը և դրա կապը ՆԿ-ի հավատացյալների հետ հետևյալն են՝
1. Երուսաղեմի Խորհուրդը՝ Ատյանը, Գործք 15-ում
2. Գաղատացիների 3-ում ավետարանի պատգամի աստվածաբանական ամփոփումը
3. Մովսիսական Ուխտի (ՀԿ) համեմատությունը Հիսուսի Նոր Ուխտի (ՆԿ) հետ Եբրայեցիների գիրքն է: Այն գործածում է մի քանի կատեգորիաներ, որպեսզի լուսաբանի ՆԿ-ի գերակայությունը:
4. Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Պողոսի տեսակետը Մովսիսական Օրենքի վերաբերյալ:</u>

❖ **«որպեսզի Իրենով ստեղծի»** «Իրենով» դերանունը հզոր է՝ ազդեցիկ: Փրկության և հաղորդակցության մեջ բոլոր մարդկանց իրար հետ միավորելու Աստծո հավիտենական ծրագիրը (տես՝ Ծնող. 3:15) բացառապես իրականացվեց Մեսիայի անձի գործերի և ոչ թե Մովսիսական Օրենքի միջոցով:

❖ **«մի նոր մարդ»** Հունարեն այս տերմինը նշանակում է «նոր» իր տեսակի և ոչ թե ժամանակի մեջ: Աստծո ժողովուրդը հրեաները չեն, ոչ էլ հեթանոսները, այլ Քրիստոնյաները: Եկեղեցին մի նոր հաստատություն է, Քրիստոսի մեջ, Քրիստոսի միջոցով և Քրիստոսի համար (տես՝ Հռոմ. 11:36, Կող. 1:16, Եբր. 2:10):

❖ **«խաղաղություն հաստատելով»** Սա Պողոսի համար սիրելի տերմին էր: Հռոմեացիներին ուղղված նամակում այս տերմինը Պողոսն օգտագործում է տասնմեկ անգամ և յոթն անգամ էլ Եփեսացիներում (տես՝ Եփես. 1:2, 2:14, 15, 17, 4:3, 6:15, 23): Նա կիրառում է այս տերմինը երեք կերպ՝

1. խաղաղություն Աստծո և մարդկության միջև՝ Կող. 1:20
2. Քրիստոսի միջոցով Աստծո հետ սուբյեկտիվ խաղաղություն՝ Հովհ. 14:27, 16:33, Փիլ. 4:7
3. մարդկանց միջև խաղաղություն՝ Եփես. 2:11-3:13:

Սա ներկա կրավորական դերբայ է: Քրիստոսը շարունակում է խաղաղություն անել Ադամի այն մեղավոր զավակների համար, որոնք ապաշխարությամբ և հավատքով կարձագանքեն: Քրիստոսի խաղաղությունը ինքնաբերաբար չէ (Եփես. 2:16-ի անորոշ կատարյալ ստորադասականը), բայց հասանելի է բոլորի համար (տես՝ Հռոմ. 5:12-21):

2:16 «հաշտեցնի» Հունարեն տերմինը նշանակում է ինչ-որ մեկի մի վիճակից տեղափոխել մեկ այլ վիճակի: Այն ենթադրում է հակադրվող դիրքերի փոխանակում (տես՝ Հռոմ. 5:10-11, Կող. 1:20-22, 2 Կորնթ. 5:18, 21): Ինչ-որ իմաստով հաշտեցումը Ծննդոց 3-ի անեծքի հեռացումն է: Աստված և մարդկությունը վերականգնվում են մտերմիկ փոխհարաբերության համար նույնիսկ այս կյանքում՝ այս մեղավոր աշխարհի համակարգում: Աստծո հետ այս հաշտությունը իրեն արտահայտում է այլ մարդկանց հետ և ի վերջո բնության հետ նոր փոխհարաբերությամբ (Ես. 11:6-9, 65:25, Հռոմ. 8:18-23, Հայտն. 22:3): Հրեաների և հեթանոսների վերամիավորումը Քրիստոսի միջոցով (տես՝ Եփես. 1:7) մեր աշխարհում Աստծո միաբանող գործի գեղեցիկ օրինակ է:

❖ **«մեկ մարմնում»** Միաբանության այս փոխաբերությունը Պողոսի գրքերում կիրառվում է մի քանի տարբեր կերպերով՝

1. Քրիստոսի ֆիզիկական մարմինը (տես՝ Կող. 1:22) կամ Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին (տես՝ Կող. 1:23, Եփես. 4:12, 5:23, 30):
2. Հրեայի և հեթանոսի նոր մարդկությունը (տես՝ Եփես. 2:16)
3. հոգևոր պարգևների միաբանության և տարբերության վերաբերյալ խոսելի (տես՝ 1 Կորնթ. 12:12-13,27)

Ինչ-որ իմաստով դրանք բոլորն էլ կապված են #1-ի հետ:

❖ **«խաչի միջոցով»** Հրեա առաջնորդները Քրիստոսի խաչը անեծք էին համարում (տես՝ 2 Օր. 21:23): Աստված օգտագործեց այն որպես փրկության միջոց (տես՝ Եսայի 53): Հիսուսը «անեծք» դարձավ մեր համար (տես՝ Գաղ. 3:13): Այն դարձավ Իր հաղթության կառքը (տես՝ Կող. 2:14-15), հավատացյալներին հաղթանակ տալով (1) ՀԿ-ի անեծքի վրա, (2) չար ուժերի վրա, և (3) հրեայի և հեթանոսի միջև թշնամության վրա:

NASB	**«դրանով թշնամությունը սպանելով»**
NKJV	**«այդպիսով թշնամությունը սպանելով»**
NRSV	**«այդպիսով դրանով սպանելով թշնամությունը»**
TEV	**«Քրիստոսը ոչնչացրեց թշնամությունը»**
NJB	**«իր սեփական անձի մեջ նա սպանեց թշնամությունը»**

Անգլերեն թարգմանությունները ցույց են տալիս, որ այս արտահայտությունը կարելի հասկանալ երկու կերպ: Պատճառն այն է, որ եզակի թվով դերանունը կարող է լինել տրական հոլով արական սեռի (TEV, NJB) կամ տրական հոլով չեզոք սեռի (NASB, NRSV): Համատեքստում երկուսն էլ

հնարավոր է: Ավելի ընդարձակ համատեքստի շեշտադրությունը Քրիստոսի կատարած փրկության գործի վրա է:

2:17 Սա Եսայի 57:19-ի կամ հավանաբար 52:7-ի մեջբերում է: Պողոսն իրեն հատուկ բացատրությամբ դիմել է հեթանոսների մեջ գերեվարված հրեաների մասին ՀԿ-յան տեքստերի: Անգամ ռաբբիները դիմելով Եսայի 56:6-ին կիրառում էին այս արտահայտությունը՝ նկատի ունենալով հեթանոս նորահավատներին:

2:18 Այս գրքում հստակ սահմանվում է Երրորդության գործը (տես՝ Եփես. 1:3-14, 17, 2:18, 4:4-6): Չնայած որ «երրորդություն» տերմինը սուրբգրային բառ չէ, գաղափարը հաստատ սուրբգրային է (տես՝ Մատթ. 3:16-17, 28:19, Հովհ. 14:26, Գործք 2:33-34, 38-39, Հռոմ. 1:4-5, 5:1,5, 8:9-10, 1 Կորնթ. 12:4-6, 2 Կորնթ. 1:21-22, 13:14, Գաղ. 4:4-6, Եփես. 1:3-14, 2:18, 3:14-17, 4:4-6, 1 Թեսաղ. 1:2-5, 2 Թեսաղ. շ2:13, Տիտոս 3:4-6, 1 Պետ. 1:2, Հուդա 20-21): Տե՛ս Հատուկ Թեմա, Եփես. 1:3-ում:

❖ **«մենք երկուսս էլ մուտք ունենք»** Սա ներկա ներգործական սահմանական է, որը նշանակում է «մենք շարունակում են մուտքի իրավունք ունենալ»: Սա Հիսուսի կողմից հավատացյալներին անձամբ Աստծո ներկայության մեջ բերելու և նրանց անձնապես ծանոթացնելու գաղափարն է (տես՝ Հռոմ. 5:2, այն նաև գործածվում է համարձակության իմաստով Եբր. 4:16, 10:19,35-ում):

❖ **«նույն Հոգով»** Սա նաև շեշտադրվում է Եփես. 4:4-ում: Սուտ վարդապետները տարաձայնության՝ բաժանման պատճառ էին դառնում, իսկ Հոգին բերում էր միաբանություն (ոչ թե միատեսակություն):

2:19 Հեթանոսները, որոնք օտարացած էին (Եփես. 2:11-12) այժմ լիարժեք կերպով ներգրավված էին: Սա հստակ սահմանվում է չորս տարածված սուրբգրային փոխաբերությունների կիրառությամբ՝

1. համաքաղաքացիներ (քաղաք)
2. սուրբեր (սուրբ ազգ՝ Աստծո համար առանձնացված)
3. Աստծո ընտանիք (ընտանիքի անդամներ)
4. հոգևոր շինություն (տաճար, Եփես. 2:20-22ա)

❖ **«սուրբեր»** Տե՛ս Հատուկ Թեմա Կող. 1:2-ում:

2:20 «կառուցված հիմքի վրա» Սա անորոշ կատարյալ կրավորական դերբայ է: Մեր հավատքի հիմքը (տես՝ Եփես. 2:12) ամբողջովին, վերջնական և կատարելապես դրվել է Եռամեկ Աստծո կողմից: Աստծո բարի լուրը քարոզվեց Առաքյալների և մարգարեների միջոցով (տես՝ Եփես. 3:5):

❖ **«առաքյալների ու մարգարեների հիմքը»** Հիսուսը դրեց ավետարանի հիմքը (տես՝ 1 Կորնթ. 3:11): Հիսուսն է նոր տաճարը (տես՝ Հովհ. 2:19-22): ՀԿ-ը մարգարեցավ Աստծո գալիք Թագավորության մասին. Հիսուսի Հոգով առաջնորդվող կյանք, մահը, հարությունը իրականացրեց դա, իսկ Առաքյալները քարոզեցին դրա իրողությունը: Միակ հարցն այն է, թե ո՞ւմ է վերաբերում «մարգարեներ» տերմինը: Արդյո՞ք նրանք ՀԿ-յան մարգարեներն են, թե ՆԿ-յան (տես՝ Եփես. 3:5, 4:1): Ըստ տերմինների հերթականության ենթադրվում են ՆԿ-յան մարգարեներ (տես՝ Եփես. 2:3-5, 4:11), սակայն «անկյունաքարի» վերաբերյալ ՀԿ-ում Մեսիային վերաբերող մեջբերումները ենթադրում են ՀԿ-յան մարգարեություն:

ՀԿ-ի և ՆԿ-ի մարգարեների միջև տարբերության պատճառը հայտնության խնդիրն է: ՀԿ-յան մարգարեները գրեցին Սուրբ Գիրքը: Նրանք ներշնչված ինքնաբացահայտման Աստծո գործիքն էին: Սակայն ՆԿ-ում մարգարեությունը շարունակվող՝ հարատևող պարգև է (1 Կորնթ. 12:28, Եփես. 4:11): Արդյո՞ք Սուրբ Գիրքը շարունակվում է գրվել: Պետք է որ ներշնչանքի (Առաքյալների և ՀԿ մարգարեների) և լուսավորության ու հոգևոր պարգևների (ՆԿ-ի պարգևներ ունեցող հավատացյալները) միջև լինի ընդգծված տարբերություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: NEW TESTAMENT PROPHECY

I. Այն նույնը չէ, ինչ ՀԿ-ի մարգարեությունը (BDB 611), որն ուներ ՅԱՀՎԵից ներշնչված հայտնությունների ռաբբիական նշանակությունը (տես՝ Գործք 3:18,21, Հռոմ.16:26): Միայն մարգարեները կարող էին գրել Սուրբ Գիրքը:
Ա. Մովսեսը մարգարե էր կոչվում (տես՝ 2 Օր.18:15-21)
Բ. Պատմական գրքերը (Հեսուից մինչև Թագավորացներ՝ բացի Հռութից) կոչվում են «վաղ մարգարեներ» (տես՝ Գործք 3:24):
Գ. Մարգարեները գրավեցին Քահանայապետերի տեղը, որպես Աստծուց տեղեկության աղբյուր (տես՝ Եսայի - Մաղաքիա):
Դ. Եբրայական կանոնի երկրորդ բաժինը «Մարգարեներն» են (տես՝ Մատթ.5:17; 22:40, Ղուկ. 16:16, 24:25,27, Հռոմ.3:21):

II. ՆԿ-ում այս հասկացությունը կիրառվում է մի քանի տարբեր կերպերով՝

Ա. Առնչվում է ՀԿ-ի մարգարեներին և նրանց ներշնչված խոսքին (տես՝ Մատթ.2:23, 5:12, 11:13, 13:14, Հռոմ.1:2):
Բ. Առնչվում է որևէ անհատի՝ անձի վերաբերող խոսքի, քան թե հավաքական խմբի (այսինքն՝ ՀԿ մարգարեները խոսում էին հիմնականում Իսրայելին):
Գ. Առնչվում է թե՛ Հովհաննես Մկրտչին (տես՝ Մատթ.11:9, 14:5, 21:26, Ղուկ.1:76) և թե՛ Հիսուսին որպես Աստծո Թագավորության քարոզիչների (տես՝ Մատթ.13:57, 21:11,46, Ղուկ.4:24, 7:16, 13:33, 24:19): Հիսուսը նաև հայտարարեց, որ Ինքն ավելի մեծ է քան մարգարեները (տես՝ Մատթ. 11:9, 12:41, Ղուկ.7:26):
Դ. ՆԿ-ում գտնվող այլ մարգարեներ՝
1. Հիսուսի կյանքի վաղ շրջանը, ինչպես արձանագրված է Ղուկասի Ավետարանում (այսինքն՝ Մարիամի հիշողությունները)
ա. Եղիսաբեթը (տես՝ Ղուկ.1:41-42)
բ. Զաքարիան (տես՝ Ղուկ.1:67-79)
գ. Սիմեոնը (տես՝ Ղուկ.2:25-35)
դ. Աննան (տես՝ Ղուկ.2:36)
2. Հեգնական կանխատեսումները (տես՝ Կայիափան, Հովհ.11:51)
Ե. Վերաբերում է այն մարդուն, որը ավետարանն է քարոզում (քարոզելու պարգևների ցանկը 1 Կորնթ.12:28-29, Եփես.4:11):
Զ. Վերաբերում է եկեղեցում մշտապես գործող պարգևին (տես՝ Մատթ.23:34, Գործք 13:1, 15:32, Հռոմ.12:6, 1 Կորնթ.12:10,28-29, 13:2, Եփես.4:11): Երբեմն սա կարող է վերաբերել կանանց (տես՝ Ղուկ.2:36, Գործք 2:17, 21:9, 1 Կորնթ.11:4-5):
Է. Վերաբերում է Հայտնության ապոկալիպտիկ գրքին (տես՝ Հայտն.1:3, 22:7,10,18,19):

III. ՆԿ մարգարեները

Ա. ՆԿ-ի մարգարեները չեն մատուցում ներշնչված հայտնությունը այն նույն իմաստով ինչպես ՀԿ-ի մարգարեները (այսինքն՝ Սուրբ Գիրքը): Այս խոսքը հավանական է Գործք 6:7, 13:8, 14:22, Գաղ.1:23, 3:23, 6:10, Փիլ.1:27, Հուդա 3,20 համարներում «հավատքը» (այսինքն՝ լրիվ ավետարանի իմաստով) խոսքի կիրառությամբ:

Այս հասկացությունը պարզ է դառնում Հուդա 3-ում գործածվող հետևյալ ամբողջական արտահայտությունից. «այն հավատի համար, որ մեկընդմիշտ ավանդվեց սրբերին»: «Մեկընդմիշտ» /անգլ.՝ մեկ անգամ բոլորի համար/ հավատը վերաբերում է Քրիստոնեության ճշմարտություններին, վարդապետություններին, գաղափարներին, աշխարհայաց ուսմունքներին: Աստվածաշնչում այս մեկ անգամ

տրված շեշտադրումը այն հիմքն է, որն աստվածաբանորեն ՆԿ-ի գրքերի ներշնչանքը սահմանափակում է և արգելում հետագայում հայտնություն համարվող այլ գրքեր ավելացվեն: Գոյություն ունեն բազմաթիվ երկիմաստ, անորոշ և խրթին տեղեր ՆԿ-ում, սակայն հավատացյալները հավատքով հաստատում են, որ ամեն ինչ, որ հավատքի և կյանքի համար «անհրաժեշտ» է, ՆԿ-ում բավարար հստակությամբ ներառված է: Այս հասկացությունը պատկերվում է այսպես կոչվող «հայտնության եռանկյունու» մեջ:

1. Աստված հայտնել է Իրեն պատմության ժամանակի մեջ (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ)
2. Նա ընտրել է որոշ մարդկանց՝ գրողների, որպեսզի փաստագրեն և մեկնաբանեն Իր գործերը (ՆԵՐՇՆՉԱՆՔ)
3. Նա մարդկանց տվել է Իր Հոգին, որպեսզի բացի նրանց միտքն ու սիրտը՝ այս գրքերը հասկանալու համար, պարտադիր չէ լիարժեք կերպով, այլ փրկության և Քրիստոնեական կյանք վարելու համար բավարար չափով (ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ): Ուզում եմ ասել, որ ներշնչանքը սահմանափակված է Սուրբ Գրքի հեղինակներով՝ գրողներով: Այլևս չկան հեղինակավոր գրվածքներ, տեսիլքներ կամ հայտնություններ: Կանոնը փակված է: Մենք ունենք այն ամբողջ ճշմարտությունը, որի կարիքն ունեինք Աստծուն պատշաճ կերպով արձագանքելու համար: Այս ճշմարտությունը լավագույնս երևում է աստվածաշնչյան հեղինակների համաձայնության մեջ՝ ի հակադրություն անկեղծ, աստվածավախ հավատացյալների անհամաձայնության: Ոչ մի ժամանակակից գրող կամ պատգամախոս չունի Աստվածաշնչյան հեղինակների գերբնական առաջնորդության մակարդակը:

Բ. ՆԿ-ի մարգարեները ինչ-որ առումով նման են ՀԿ-ի մարգարեներին՝

1. ապագա դեպքերի կանխատեսում (տես՝ Պողոս՝ Գործք 27:22, Ագաբուս՝ Գործք 11:27-28; 21:10-11, այլ անանուն մարգարեներ՝ Գործք 20:23)
2. հռչակում են դատաստան (տես՝ Պողոս՝ Գործք 13:11; 28:25-28)
3. սիմվոլիկ գործեր, որոնք տեսանելի կերպով պատկերում են իրադարձությունը (տես՝ Ագաբուս՝ Գործք 21:11)

Գ. Նրանք հռչակում են ավետարանի ճշմարտությունները երբեմն կանխատեսելի կերպերով (տես՝ Գործք 11:27-28; 20:23; 21:10-11), սակայն սա հիմնական նպատակը չէ: Առաջին Կորնթացիների գրքում մարգարեանալը հիմնականում ավետարանը փոխանցելն է (տես՝ 14:24,39):

Դ. Դրանք Սուրբ Հոգու ժամանակավոր միջոցներն են, որպեսզի հայտնեն Աստծո ճշմարտության ժամանակավոր և գործնական կիրառությունները յուրաքանչյուր նոր իրավիճակի, մշակույթի կամ ժամանակաշրջանի մեջ (տես՝ 1 Կորնթ.14:3):

Ե. Դրանք գործում էին Պողոսի ծառայության վաղ շրջանի եկեղեցիներում (տես՝ 1 Կորնթ. 11:4-5, 12:28,29, 13:2,8,9, 14:1,3,4,5,6,22,24,29,31,32,37,39, Եփես.2:20, 3:5, 4:11, 1 Թեսաղ. 5:20) և նշվում են *Դիդաքում* (գրված առաջին դարի վերջում կամ երկրորդ դարում. տարեթիվը հայտնի չէ) և հյուսիսային Աֆրիկայում երկրորդ և երրորդ դարերի Մոնտանիզմում:

IV. Արդյո՞ք ՆԿ-ի պարգևները դադարել են:

Ա. Այս հարցին դժվար է պատասխանել: Հարցը պարզելու համար մեզ կօգնի պարգևների նպատակի սահմանումը: Արդյո՞ք դրանք ավետարանի քարոզչության սկզբնական շրջանում հաստատության համար էին նախատեսված, թե հանդիսանում են շարունակվող գործիքներ եկեղեցու համար, որպեսզի ծառայեն թե՛ եկեղեցուն, և թե՛ մեղավոր աշխարհին:

Բ. Արդյո՞ք այս հարցին պատասխանելու համար դիմում ենք եկեղեցու պատմությանը, թե հենց ՆԿ-ին: ՆԿ-ում ոչ մի տեղ չի նշվում, որ այս պարգևները ժամանակավոր էին: Այն մարդիկ, որոնք այս հարցին պատասխանելու համար փորձում են օգտագործել 1 Կորնթ. 13:8-13, նրանք չարաշահում են հեղինակի կողմից այս հատվածում նկատի

ունեցած միտքը, այսինքն այն, որ նա փորձում էր հաստատել, որ ամեն ինչ, բացի սիրուց անցողիկ է:

Գ. Ուզում եմ ասել, քանի որ հեղինակություն հանդիսանում է ոչ թե եկեղեցու պատմությունը, այլ ՆԿ-ը, ապա հավատացյալները պետք է հաստատեն, որ պարգևները շարունակվում են: Սակայն կարծում եմ, որ մշակույթը ազդեցություն է թողնում մեկնաբանության վրա: Որոշ շատ հստակ տեքստեր այլևս կիրառելի չեն (այսինքն՝ սուրբ համբույրը, կանանց գլուխները քողարկելը՝ գլխաշոր կրելը, տնային եկեղեցիները, և այլն): Եթե մշակույթը ազդում է տեքստերի վրա, ապա ինչո՞ւ չի կարող ազդել նաև եկեղեցու պատմության վրա:

Դ. Սա պարզապես մի հարց է, որը հնարավոր չէ վերջնական պատասխանել: Որոշ հավատացյալներ պաշտպանում են «դադարելը» իսկ ոմանք «չդադարելը»: Այս հարցում, ինչպես և շատ այլ մեկնաբանական խնդիրներում, հավատացյալի սիրտն է կարևորը: ՆԿ-ը երկիմաստ և մշակութային է: Դժվարությունը որոշելն է, թե որ տեքստերն են, որ հակված են մշակույթի, պատմության ազդեցությանը ենթարկվելուն և որոնք՝ բոլոր ժամանակների և բոլոր մշակույթների համար են (տես՝ Fee and Stuart's *How to Read the Bible for All Its Worth*, էջ՝ 14-19 և 69-77): Ահա թե որտեղ են ազատության և պատասխանատվության շուրջ քննարկումները այսքան կարևոր. դրանք արձանագրված են Հռոմ.14:1-15:3 և 1 Կորնթացիների 8-10-ում: Հարցին պատասխանելու մեր կերպը կարևոր է երկու պատճառով՝

1. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է քայլի հավատքի այն լույսի ներքո, որն ունի: Աստված նայում է քո սրտին և շարժառիթներին:
2. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է թույլ տա մյուս հավատացյալներին, որ քայլի հավատքի իր հասկացողության մեջ: Պետք է աստվածաշնչյան սահմաններում հանդուրժողականություն ցուցաբերվի: Աստված ուզում է, որ իրար սիրենք այնպես ինչպես Ինքն է մեզ սիրում:

Ե. Որպես այս հարցի ամփոփում ուզում եմ ասել, որ Քրիստոնեությունը հավատքի և սիրո կյանք է և ոչ թե կատարյալ աստվածաբանություն: Նրա հետ մեր ունեցած փոխհարաբերությունը, որն ազդեցություն է թողնում ուրիշների հետ մեր փոխհարաբերության վրա, շատ ավելի կարևոր է, քան հաստատ տեղեկատվությունը կամ դավանության կատարելությունը:

❖ **«անկյունաքարը»** Սա ՀԿ-յան Մեսիական փոխաբերություն է (տես՝ Ես.28:16, Սաղմ.118:22, 1 Պետ.2:4-8): ՀԿ-ում Աստծո հաստատակամությունը, ուժը և համբերատարությունը հաճախ պատկերվում էր «Ժայռ» տիտղոսով (տես՝ 2 Օր.32:4, 15, 18, 30, Սաղմ.18:2, 31, 46, 28:1, 31:3, 42:9, 71:3, 78:15):

Հիսուսի վերաբերյալ փոխաբերությունները որպես քար՝

1. անարգված քար՝ Սաղմ.118:22
2. շինության քար՝ Սաղմ.118:22, Ես.28:16
3. գայթակղության քար՝ Ես.8:14-15
4. հաղթող և նվաճող քար (թագավորություն)՝ Դան.2:45
5. Հիսուսն օգտագործեց այս հատվածները Իրեն նկարագրելու համար (տես՝ Մատթ.21:42, Մարկ.12:10, Ղուկ.20:17)

Նա կառույցի մեջ կարևորագույն դետալն է, որը մերժվեց՝ անարգվեց ՀԿ-ի ավանդապաշտության և օրինապաշտության մեջ (տես՝ Ես.8:14):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ
SPECIAL TOPIC: CORNERSTONE

I. ՀԿ կիրառությունը

Ա. Քարի գաղափարը, որպես ամուր, դիմացկուն առարկա, որը լավ հիմք էր հանդիսանում, գործածվում էր նկարագրելու համար ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Սաղմ.18:2):
Բ. Ապա այն վերածվեց Մեսիական տիտղոսի՝ անվան (տես՝ Ծննդ.49:24, Սաղմ.118:22, Ես.28:16):
Գ. Այն եկավ ներկայացնելու Մեսիայի միջոցով ՅԱՀՎԵԻ դատաստանը (տես՝ Ես.8:14, Դան. 2:34-35, 44-45):
Դ. Սա վերածվեց շինության փոխաբերության՝
1. մի հիմնաքարի, որը առաջինն են դնում, որը ապահով է և ամբողջ շինության անկյունները դրա միջոցով է ուղղվում, և կոչվեց «անկյունաքար»
2. այն կարող է նաև վերաբերել վերջին քարին, որ դրվում է շինության մեջ իր տեղը, որը իրար է միացնում պատերը (տես՝ Զաք.4:7, Եփես.2:20,21), որը կոչվում է «գլխավոր քար»՝ Եբրայերեն *rush* (այսինքն՝ գլուխ) բառից:
3. այն կարող է վերաբերել «բանալի՝ հիմնական քարին», որը դռան կամարի մեջտեղում էր դրվում և պահում էր ամբողջ պատի ծանրությունը:

II. ՆԿ կիրառությունը

Ա. Իր մասին խոսելիս մի քանի անգամ Հիսուսը մեջբերեց Սաղմոս 118-ից (տես՝ Մատթ. 21:41-46, Մարկ.12:10-11, Ղուկ.20:17):
Բ. Պողոսը գործածում է Սաղմոս 118-ը՝ անհավատ, ապստամբ Իսրայելին ՅԱՀՎԵԻ մերժման հետ կապված (տես՝ Հռոմ.9:33):
Գ. Պողոսը կիրառում է «անկյունաքարի» գաղափարը Եփես.2:20-22, վկայակոչելով Քրիստոսին:
Դ. Պետրոսը կիրառում է Հիսուսի մասին այս հասկացությունը 1 Պետ.2:1-10: Հիսուսը անկյունաքարն է և հավատացյալները կենդանի քարերն են (այսինքն՝ հավատացյալները որպես տաճարներ, տես՝ 1 Կորնթ.6:19) կառուցված Նրա վրա (այսինքն՝ Հիսուսը նոր Տաճարն է, տես՝ Մարկ.14:58, Մատթ.12:6, Հովհ.2:19-20): Հրեաները մերժելով Հիսուս Մեսիային մերժեցին իրենց հավատքի հենց հիմքը:

III. Աստվածաբանական սահմանումներ

Ա. ՅԱՀՎԵՆ թույլատրեց Դավթին, Սողոմոնին կառուցելու տաճար: Նա ասաց նրանց, որ եթե նրանք պահեն ուխտը, Նա կօրհնի նրանց և նրանց հետ կլինի (տես՝ 2 Թագ. 7), սակայն եթե նրանք չպահեն, ապա տաճարը կավերվի (տես՝ 3 Թագ. 9:1-9):

Բ. Ռաբբիական հուդայականությունը կենտրոնացել էր ձևի և ծեսերի վրա, անտեսելով անձնական հավատքի ասպեկտը (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-38): Աստված փնտրում է ամենօրյա, անձնական, աստվածահաճո փոխհարաբերություն Իր պատկերով ստեղծված մարդկանց հետ (տես՝ Ծննդ.1:26-27): Ղուկ. 20:17-18 պարունակում է դատաստանի սարսափելի խոսքեր, ինչպես և Մատթ. 5:20, որն ուղղված է հուդայականությանը:

Գ. Հիսուսը կիրառեց տաճարի գաղափարը ներկայացնելու Իր ֆիզիկական մարմինը (տես՝ Հովհ.2:19-22): Այն շարունակվում է և ընդլայնում Հիսուսի վրա եղած անձնական հավատքի գաղափարը, քանի որ Մեսիան է հանդիսանում ՅԱՀՎԵԻ հետ փոխհարաբերության ճանապարհը (այսինքն՝ Հովհ.14:6, 1 Հովհ.5:10-12):

Դ. Փրկության նպատակն է մարդկանց մեջ վերականգնելու Աստծո ապականված պատկերը (Ծննդ.1:26-27 և գլուխ 3), որպեսզի Աստծո հետ փոխհարաբերությունը հնարավոր դառնա: Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է: Հավատացյալները պետք է դառնան կենդանի քարեր (այսինքն՝ փոքր տաճարներ կառուցված Քրիստոսի վրա՝ Նրա թողած օրինակով, տես՝ 1 Կորնթ.6:19):

Ե. Հիսուսն է մեր հավատքի հիմքը և մեր հավատքի անկյունաքարը (այսինքն՝ Ալֆան և Օմեգան): Մինչդեռ Նա նաև գայթակղության քարը և անարգված քարն է: Կորցնել Նրան նշանակում է կորցնել ամեն բան: Այստեղ չկա ձեռնպահ՝ չեզոք դիրք:

2:21-22 Աստծո ժողովրդի կոլեկտիվ կամ հավաքական գաղափարը երևում է Եփես.2:19-ում (երկու անգամ), 21 և 22-ում արտահայտվում է «սուրբեր» հոգնակիով: Փրկվել նշանակում է լինել ընտանիքի, կառույցի, մարմնի, տաճարի մի մաս (տես՝ Եփես.1:23, 4:16, Կող.2:19):

Եկեղեցու գաղափարը որպես տաճար արտահայտված է 1 Կորնթ.3:16-17-ում: Սա եկեղեցու հավաքական բնույթի վրա շեշտադրություն է: Անհատական առանձնահատկությունը արտահայտված է 1 Կորնթ.6:16-ում: Երկուսն էլ ճիշտ են: Հիսուսն է նոր տաճարը, տես՝ Հովհ.2:19-22:

Եփես.2:21-22-ում բայը նույնպես ունի հավաքական նշանակություն: Դրանք ունեն *syn* բաղադրյալի կազմությունը, որը նշանակում է «համագործակցություն»: Դրանք երկուսն էլ ներկա կրավորական են: Աստված շարունակում է կառուցել, ավելացնել Իր եկեղեցու վրա:

Գոյություն ունի հունարեն ձեռագրային մի խնդիր կապված այս արտահայտության հետ՝ «ամբողջ շինությունը»: Հնագույն ℵ*, B, D, F և G ունցիալ ձեռագրերը չունեն հոդ, մինչդեռ ℵ^c, A, C և P ձեռագրերն ունեն: Հարցն այս է, թե արդյո՞ք Պողոսը նկատի ուներ մի մեծ ընդհանուր շինություն՝ կառույց (NASB, NKJV, NRSV, NIV, TEV, REB) թե մի քանի փոքր կառույցներ (ASV, NJB, Phillips) ինչ-որ կերպ իրար հետ միաբանված: Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության (UBS[4]) Հունարեն տեքստի 4-րդ Խմբագրությունը գնահատում է «B» անարտրուսային կառույցի համար, որը նշանակում է, որ «գրեթե հաստատ» է, որ վերաբերում է մեկ շինության: Այս մեկ շինությունը դեռևս ավարտուն չէ: Այն աճելու՝ մեծանալու գործընթացի մեջ է: Շինության փոխաբերությունը ակնարկվում է որպես հոգևոր տաճար (Աստծո ժողովուրդը):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ
SPECIAL TOPIC: EDIFY

Այս տերմինը՝ *oikodomeō* և դրա մյուս ձևերը հաճախ են կիրառվում Պողոսի կողմից: Տառացի այն նշանակում է «տուն կառուցել՝ շինել» (տես՝ Մատթ.7:24), սակայն այն սկսել է փոխաբերորեն կիրառվել.

1. Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու համար, 1 Կորնթ.3:9; Եփես.2:21; 4:16
2. քաջալերելու՝ զորացնելու.
   ա. տկար եղբայրներին, Հռոմ.15:1
   բ. հարևաններին, Հռոմ.15:2
   գ. մեկը մյուսին՝ միմյանց, Եփես.4:29; 1 Թեսաղ.5:11
   դ. սրբերին՝ ծառայության համար, Եփես.4:11
3. մենք քաջալերում կամ շինություն ենք տալիս՝
   ա. սիրով, 1 Կորնթ.8:1; Եփես.4:16
   բ. սահմանափակելով մեր անձնական ազատությունը, 1 Կորնթ.10:23-24
   գ. չարաշահումներից խուսափելով, 1 Տիմ.1:4
   դ. սահմանափակելով երկրպագության ծառայության խոսնակներին (երգիչներ, ուսուցիչներ, մարգարեներ, լեզուներով խոսացողներ և թարգմանիչներ), 1 Կորնթ.14:3-4,12
4. ամեն ինչ պետք է շինություն տա՝
   ա. Պողոսի հեղինակությունը, 2 Կորնթ.10:8; 12:19; 13:10
   բ. ամփոփիչ խոսքերը Հռոմ.14:19 և 1 Կորնթ.14:26-ում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք բոլոր մարդիկ են օտարացած Աստծուց:
2. Արդյո՞ք մարդիկ կարևոր մասնաբաժին ունեն իրենց իսկ փրկության հարցում:
3. Ինչո՞ւ է այդքան կարևոր հրեայի և հեթանոսի միաբանությունը:
4. Ինչպե՞ս Հիսուսը «անվավեր դարձրեց» Օրենքը:
5. Արդյո՞ք Աստծո Օրենքը հավիտենական է: Ի՞նչ կապ ունեն Քրիստոնյաները Մովսիսական Օրենքի և ամբողջ Հին Կտակարանի հետ:
6. Ինչո՞ւ է Պողոսը Եփես. 2:19-23-ում շեշտադրում շինության փոխաբերությունը: